

**ԽՈՐՀՐԴԱՏԵՐ
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ**



**ԶՄՄԱՌ
2007**



ՉՄՄԱՌՈՒ ՏԻՐԱՄԱՅԻ

**ԽՈՐՀՐԴԱՏԵՏԻ
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ**

**ԱՇԽԱՐՀԱԲԱՐ
ԹԱՐԳՍԱՆՈՒԹԵԱՄԲ**

* * *

ԹԻՒ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

**ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ
ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ**

**ԶՄԱՆ
2 0 0 7**

Հրամանով՝

Ամենապատիւ եւ Գերերջանիկ
ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.Ի
Կաթողիկոս Պատրիարք
Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց

Հասանութեամբ՝

Հայ Կաթողիկէ Եկեղեցոյ
Եպիսկոպոսաց Սիւնհոդոսին

Թիւ Սուրբ Պատարա ՚ի
Աշխարհաբար Թար ՝մանութիւն

Աշխատասիրութեամբ՝

Հայ Կաթողիկէ Եկեղեցոյ
Ծիսական Յանձնախումբին

Հրատարակութիւն

Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան

ՉՄՍԱՌ

10 Հոկտեմբեր 2 0 0 6

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

Պեյրուֆ, 7 Նոյեմբեր 2006

Դիւան թիւ 279/06

Հայրապետական մեր իշխանութեամբ կը տնօրինենք Թիւ Սուրբ Պատարագի աշխարհաբար արեւմտահայ այս թարգմանութիւնը ի գործածութիւն մեր ժողովրդապետական եկեղեցիներուն մէջ, յօգուտ մեր ազգի զաւակներուն:

Հայ Կաթողիկէ Եկեղեցոյ Ծիսական Յանձնախումբի սոյն թարգմանութիւնը, ընդունուեցաւ Մարտ 2006 Եպիսկոպոսաց Սինհոդոսի կողմէ:

Հայրական Օրհնութեամբ՝

Ներսէս Պետրոս ԺԹ.
Կաթողիկոս Պատրիարք
Տանն Կիլիկիոյ
Կաթողիկէ Հայոց

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Մեր քրիստոնեական կեանքին կեդրոնը սուրբ պատարագի զոհն է: Մկրտութեամբ քրիստոնեայ կը դառնանք, սակայն Քրիստոսի Մարմինն ու Արիւնն է որ կը սնուցանեն ու կը զօրացնեն մեր հոգիները: Քրիստոս Ինք հաստատեց զայն Իր Առաքեալներուն հետ հրաժեշտի ընթրիքի պահուն, պատուիրելով անոնց որ նոյնը իրենք եւս կատարեն, թէ՛ իրենց հոգիներուն բարիքին եւ թէ՛ Իր յիշատակը յաւերժացնելու համար:

Հայ Կաթողիկէ Եպիսկոպոսաց Սինհոդոսը, գիտակից այն հիմնական դերին, զոր ունի Պատարագը հաւատացեալներու հոգեւոր կեանքին մէջ, անհրաժեշտ նկատեց օժանդակել անոնց՝ ատելի գործօն մասնակցութեան, քանի Պատարագը պաշտամունքն է համայն քրիստոնեայ հասարակութեան եւ ոչ թէ քահանային միայն: Առ այդ, անոր խորիմաստ բովանդակութիւնը

աւելի դիրահաղորդ դարձնելու համար, որոշեց, գրաբար բնագիրի կողքին, հրատարակել անոր աշխարհաբար թարգմանութիւնը, ի գործածութիւն եւ յօգուտ բարեպաշտ հաւատացեալին:

Ծանօթ է որ առհասարակ Արեւմտեան թէ Արեւելեան Ծէսի պատկանող բոլոր Եկեղեցիները ծիսական պաշտամունքի մէջ, որդեգրած են ժողովուրդին լեզուն թէ՛ դիրացնելու համար ժողովուրդին կողմէ անոր ըմբռնումը, թէ՛ ջնջելու համար հաւատացեալին հոգեւոր եւ աշխարհական կեանքին միջեւ անջատումը:

Մեր Եպիսկոպոսաց Սիւնհոդոսը հասած նկատեց այս քայլը նաեւ մեր Եկեղեցիին մէջ առնելու ժամանակը, համոզուած ըլլալով որ ան դրապէս պիտի ընկալուի մեր հաւատացեալներէն, քանի կը համապատասխանէ անոնցմէ շատերուն բաղձանքին եւ ակնկալութեան:

Պետք է նշել, որ աշխարհաբար այս թարգմանութիւնը պիտի կիրարկուի միայն թիւ Պատարագի մատուցումի ընթացքին եւ առ ի փորձ երեք տարուայ համար, բաղձացուած արդիւնքը ակնկալելով: Որմէ ետք, Սիւնհոդոսական Հայրերը անդրա-

գոյն քայլեր պիտի առնեն:

Մաղթելով որ այս նախաձեռնութիւնը մեր ժողովուրդին մէջ հրահրէ առաւել ջերմեռանդութիւն սուրբ Պատարագի գոհին հանդէպ եւ քաջալերէ զիրենք առաւել հաւատարմութեամբ մերձենալու այս սուրբ խորհուրդին, սիրով կը յանձնենք անոնց այս հաւատքի մատեանը:

ԾԻՍԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ
ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

ԹԻԻ ՊԱՏԱՐԱԳԻ

ՍԿԻԶԲՆ ՊԱՏԱՐԱԳԻ

Քաճանայն ի յայն ԳեառնաԳրեալ զինչն է-
Գարաժեալ զՅեռոս, առասցէ.

Յանուն Հօր եւ ՈրդՅւոյ եւ Հոգւոյն սրբոյ.
ամէն:

Վասն սրբուհւոյ Աստուածածինն, Տէր, ըն-
կալ զաղաչանս մեր, եւ կեցո զմեզ:

Ապաստորն. Սուրբ զԱստուածածինն եւ
զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ
Հայր ի յերկինս. զի կամեցեալ ողորմեսցի, եւ
գթացեալ կեցուցէ զարարածս իւր: Ամենա-
կալ Տէր Աստուած մեր կեցո եւ ողորմեա:

Քաճանայն. Ընկալ Տէր զաղաչանս մեր
բարեխօսութեամբ սուրբ Աստուածածինն,
անարատ ծնողի միածնի Որդւոյ քոյ, եւ աղա-
չանօք ամենայն սրբոց քոց, (եւ աւուրս շնոր-
հիւ, կամ եւ որոց այսօր է յիշատակ) լուր մեզ
Տէր եւ ողորմեա, ներեա, քաւեա եւ թող
զմեղս մեր: Արժանաւորեա գոհութեամբ փա-
ռաւորել զքեզ ընդ Որդւոյ եւ ընդ սուրբ Հոգ-

ԹԻԻ ՊԱՏԱՐԱԳԻ

ՍԿԻԶԲԻ ՊԱՏԱՐԱԳԻ

Պատարագիչը, ինչպիսիքն էլ խաչակնիչելով
է- յեռ-իերը պարաթելով, կ'աղօթէ.

Յանուն Հօր եւ Որդիայ եւ Հոգւոյն սրբոյ.
ամէն:

Սուրբ Աստուածածինն բարեխօսութեամբ,
Տէր, ընդունէ՛ մեր աղաչանքները եւ փրկէ՛ մեզ:

Հա-պարայեալը - Սուրբ Աստուածածինը եւ
բոլոր Սուրբերը բարեխօս ըլլան Հօր մօտ, որ
երկինքն է, որպէսզի Հաճի ողորմիլ եւ գթալով
փրկէ իր արարածները: Ամենակա՛լ Տէր Աստ-
ուած մեր, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

Պատարագիչը - Ընդունէ՛, Տէր մեր աղա-
չանքները Միածին Որդիիդ Անարատ Մօր՝
Սուրբ Աստուածածինն բարեխօսութեամբ եւ
քու բոլոր Սուրբերուդ աղաչանքներով (եւ
որոնց յիշատակն է այսօր կամ այս օրուան
շնորհիւ): Լսէ՛ մեզ, Տէր, եւ ողորմէ՛ մեզի, նե-
րէ՛, քաւէ՛ եւ թո՛ղ մեր մեղքերը: Արժանի ըրէ՛
մեզ՝ գոհաբանութեամբ փառաւորելու Քեզ,

ւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից.
ամէն:

Չէոնամաջ խոնարհեալ առ խորանն.

Խոստովանիմ առաջի Աստուծոյ, եւ սրբուհոյ Աստուածածնին, եւ առաջի ամենայն սրբոց, եւ առաջի ձեր, Հս' ըք եւ եղբարք, զամենայն մեղս զորս գործեալ եմ: Քանզի մեղայ խորհրդով բանիւ եւ գործով, եւ ամենայն մեղօք՝ զոր գործեն մարդիկ, մեղայ, մեղայ: Աղաչեմ զձեզ՝ խնդրեցէք վասն իմ Աստուծոյ զթողութիւն:

Ապաստանորն. Ողորմեսցի քեզ Աստուած Հզօրն, եւ թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց, անցելոյն եւ այժմուս, եւ յառաջակայէն փրկեսցէ զքեզ, եւ Հաստատեսցէ յամենայն գործս բարիս, եւ Հանգուսցէ զքեզ ի Հանդերձեալ կեանս:

Քաճանայն. Ամէն:

Քաճանայն ողջեալ խաշակնիկեսցէ
զժողովո՞րդն՝ ասելով.

Աղատեսցէ ☩ եւ զձեզ մարդասէրն Աստ-

Որդիիդ եւ սուրբ Հոգիիդ Հետ, այժմ եւ միշտ
եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ձեռնամաշ՝ կը խոնարհի դէպի խորան.

Կը խոստովանիմ Աստուծոյ, Սուրբ Աստուածածնին, բոլոր սուրբերուն եւ ձեր առջեւ, Հայրե՛ր եւ եղբայրնե՛ր, բոլոր գործած մեղքերս: Որովհետեւ մեղանշեցի մտածումով, խօսքով, գործով եւ մարդոց գործած բոլոր մեղքերով: Մեղա՛յ, մեղա՛յ: Կ'աղաչեմ ձեզի, թողութի՛նս խնդրեցէք Աստուծա՛յ ինձի Համար:

Հա՛-ապրացեալը - Թող ողորմի քեզի մարդասէր ու Հզօրն Աստուած եւ թողութի՛նս շնորհէ անցեալին թէ՛ ներկային գործած բոլոր յանցանքներուդ, ազատէ քեզ գալիքներէն եւ Հաստատ պահէ բոլոր բարի գործերուդ մէջ եւ Հասցնէ քեզ Հանդերձեալ կեանքին:

Պապարագիշը - Ամէն:

Եպա ժողովո՛ւ-րդին դառնալով

Է- պայն օրհնելով կ'ըսէ.

Մարդասէրն Աստուած ձե՛զ ալ ✠ ազա-

*ուած եւ թողցէ զամենայն յանցանա ձեր: Տա-
ցէ ժամանակ ապաշխարելոյ եւ գործելոյ զբա-
րիս: Ուղղեսցէ եւ զառաջիկայ կեանա ձեր,
չնորՀօք սուրբ Հոգւոյն, Հզօրն եւ ողորմածն.
եւ նմա փառք յաւիտեանա. ամէն:*

*Ապաստանորն. Յիշեսցիւր եւ զմեզ առաջի ան-
մահ գառիկնն Աստուծոյ:*

*Քաճանայն. Յիշեալ լիջիք առաջի անմահ
գառիկնն Աստուծոյ:*

Եւրա յարեացէ զԱսաղմոս ԽԲ. Կո-ն առ Կո-ն:

*Այորդ. Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ,
առ Աստուած որ ուրախ առնէ զմանկութիւն
իմ:*

*Ապաստանորն. Դատ արա ինձ, Աստուած, եւ
իրաւ արա ինձ ի դատաստանի իմում:*

*Քաճանայն. Յազգէ որ ոչ է սուրբ, ի մար-
դոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա զիս:*

Ապաստանորն. Դու Աստուած Հզօրիչ իմ էս,

տէ, ներէ ձեր բոլոր յանցանքները, ժամանակ տայ ապաշխարելու եւ բարիք գործելու: Թող ուղղէ ձեր յառաջիկայ կեանքը Սուրբ Հոգիին շնորհքներով, Ինք որ Հզօր է եւ ողորմած: Իրեն փառք՝ յաւիտեանս: ամէն:

Հա-աբապէալը - Մէզ ալ յիշէ Աստուծոյ անմահ Գառնուկին առջեւ:

Պաբարաթիշը - Յիշուած ըլլաք Աստուծոյ անմահ Գառնուկին առջեւ:

Եպա կ'ըստ-ի Սաղմոս 42

Պաբարաթիշը - Պիտի մտնեմ Աստուծոյ խորանին առջեւ, Աստուծոյ մօտ, որ կ'ուրախացնէ երիտասարդութիւնս:

Հա-աբապէալը - Դո՛ւ տս տես, Աստուած, եւ դատաստանիս մէջ իրաւունքս սո՛ւր ինծի:

Պաբարաթիշ - Անմաքուր ազգէն, մեղաւոր եւ նենգաւոր մարդէն փրկէ՛ զիս:

Հա-աբապէալը - Դո՛ւ նս, Աստուած, իմ՛ զօ-

ընդէ՛ր մոռացար զիս. ընդէ՛ր տրտում գնամ
եւ ի նեղել թշնամոյ իմոյ:

Քա՛հանայն. Առաքեա Տէր զոյս քո եւ
զճշմարտութիւն քո. զի առաջնորդեսցեն ինձ
եւ Հանցեն զիս ի լեառն սուրբ եւ ի յարկս քո:

Ապառա՛ս-որն. Մտից առաջի սեղանոյ Աս-
տուծոյ, առ Աստուած որ ուրախ առնէ զման-
կութիւն իմ:

Քա՛հանայն. Խոստովան եղէց քեզ օրհնու-
թեամբ, Աստուա՛ծ Աստուած իմ:

Ապառա՛ս-որն. Արդ՝ ընդէ՛ր տրտում եւ
անձն իմ, կամ ընդէ՛ր խռովես զիս. յուսա առ
Աստուած, խոստովանեա նմա, փրկիչ երեսաց
իմոց Աստուած է:

Քա՛հանայն ԳեառնաԳրեացի զինչն է- կացցի
ՅեռնամաԺ.

Փառք Հօր եւ Որդ՞ւոյ եւ Հոգւոյն սրբոյ:

րութիւնս ես, ինչո՞ւ մոռցար զիս, ինչո՞ւ տխուր շրջիմ, երբ կը նեղէ զիս թշնամին:

Պատարագիչը - Առաքէ՛, Տէ՛ր, քու լոյսդ եւ ճշմարտութիւնդ, որպէսզի առաջնորդեն ինձի եւ տանին զիս դէպի սուրբ լեռդ եւ բնակարանդ:

Հապայեալը - Պիտի մանեմ Աստուծոյ խորանին առջեւ, Աստուծոյ մօտ, որ կ'ուրախացնէ երիտասարդութիւնս:

Պատարագիչը - Օրհնութեան երգերով կը դաւանիմ Քեզ, Աստուած, ի՛մ Աստուածս:

Հապայեալը - Արդ, ինչո՞ւ տխուր ես, Հոգիս, ինչո՞ւ կը խռովես զիս. դի՛ր յոյսդ Աստուծոյ վրայ, խոստովանէ՛ անոր. Աստուած է իմ փրկիչս:

Պատարագիչը, ինչպէն ինչպէ՞ն խաչակնիւնով, կ'ըսէ.

Փա՛ռք Հօր եւ Որդ՞ուց եւ Հոգւոյն Սրբոյ:

Սպասաւորն. Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից. ամէն: Եւ եւս խաղաղութեան
զՏէր աղաչեսցուք: Օրհնեսցուք զՀայր
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ արժա-
նի արար զմեզ կալ ի տեղւոջ փառաբանու-
թեան, եւ երգել զերգս Հոգեւորս: Ամենակալ
Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա:

Քաճանայն ցարաթեալ զՅէոս' ելցէ ընդ աս-
ցիճանս, է- Համբո-րեացէ զսեղանն ասելով.

Ի յարկի սրբութեան եւ ի տեղւոջ փառա-
բանութեան, Հրեշտակաց բնակարանիս եւ
մարդկան քաւարանիս. առաջի աստուածըն-
կալ եւ պայծառացեալ սուրբ նշանացս եւ
սուրբ սեղանոյս, խոնարհեալ երկիւղիւ երկիր
պագանելք. զսուրբ, զհրաշալի եւ զյաղթող
Տէրութիւնդ քո

Կամ Յայտնութիւնդ եւ Մկրտութիւնդ քո

Կամ Գալուստդ քո քառասնօրեայ ի
տաճարն

Կամ Մարդեղութիւնդ քո, ի տօնի Աւետման
Մօր քոյ եւ Կուսի

Կամ Գալուստդ քո (Երուսաղէմ)

Հա-ադադեալը - Աժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Դարձեալ, խաղաղութեամբ Տիրոջ աղաչէնք: Օրհնէնք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Հայրը, որ արժանի ըրաւ մեզ ժողովուերու փառաբանութեան այս վայրին մէջ եւ հոգեւոր երգեր երգելու: Ամենակա՛լ Տէր, Աստուա՛ծ մեր, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

Պատարագիչը, յե-՛տերը դարաշա՛ժ՝ կը բարձրանայ սեղանը կը Համբո՛-րէ ըսելով:

Այս սուրբ յարկին տակ եւ փառաբանութեան այս վայրին մէջ, Հրեշտակներու բնակարանին եւ մարդոց քաւարանին դիմաց, խոնարհելով աստուածաՀաճոյ ու լուսապայծառ սուրբ նշաններուն եւ սուրբ սեղանին առջեւ, երկիւղածօրէն կ'երկրպագենք. կ'օրհնէնք ու կըր փառաւորենք սուրբ, Հրաշալի եւ յաղթական Տէրութիւնդ

կամ Յայտնութիւնդ եւ Մկրտութիւնդ

կամ Քառանօրեայ (տաճար) Գալուստդ

կամ Մարդեղութիւնդ, քու Կոյս Մօրդ Աւետման տօնին

կամ Գալուստդ (Երուսաղէմ)

կամ Յարութիւնդ .քո
կամ Համբարձումդ .քո
կամ Գալուստ Հոգւոյդ Սրբոյ
կամ Տէրութիւնդ Ամենասուրբ Երրորդու-
թեանդ
կամ Պայծառակերպութիւնդ .քո
կամ Գալուստդ .քո, ի Փոխումն Մօր .քո եւ
Կուսի
կամ Տէրութիւնդ .քո, ի տօնի Ծննդեան
Մօր .քո եւ Կուսի
կամ Յարութիւնդ .քո, ի տօնի Ծննդեան
Մօր .քո եւ Կուսի
կամ Խաչդ .քո
կամ Տէրութիւնդ .քո, ի տօնի Ընծայման
Մօր .քո եւ Կուսի
կամ Յարութիւնդ .քո, ի տօնի Ընծայման
Մօր .քո եւ Կուսի
կամ Յարութիւնդ .քո, ի տօնի Անարատ
Յղութեան Մօր .քո եւ Կուսի
կամ Յայտնութիւնդ .քո ի տօնի Անարատ
Յղութեան Մօր .քո եւ Կուսի
կամ Ծնունդ .քո

Կամ Յարութիւնդ

Կամ Համբարձունդ

Կամ Սուրբ Հոգւոյդ Գալուստը

Կամ Ամենասուրբ Երրորդութեանդ Տէրութիւնը

Կամ Պայծառակերպութիւնդ

Կամ Գալուստդ, Կոյս Մօրդ Փոխման տօնին

Կամ Տէրութիւնդ, Կոյս Մօրդ Ծննդեան տօնին

Կամ Յարութիւնդ, Կոյս Մօրդ Ծննդեան տօնին

Կամ Խաչդ

Կամ Տէրութիւնդ, Կոյս Մօրդ Ընծայման տօնին

Կամ Յարութիւնդ, Կոյս Մօրդ Ընծայման տօնին

Կամ Յարութիւնդ, Կոյս Մօրդ Անարատ Յղութեան տօնին

Կամ Յայտնութիւնդ, Կոյս Մօրդ Անարատ Յղութեան տօնին

Կամ Ծնունդդ

օրհնեմք եւ փառաւորեմք: Եւ քեզ մատուցանեմք զօրհնութիւն եւ զփառս ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԸՆԾԱՅՈՒՄՆ

Սպասուողք. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ կեցո եւ ողորմիս:

Քաճանայն բացեալ զակիճն՝
խաշակնի՛կեացէ զնշխարն ասելով.

Քաճանայն. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոջ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ասաց զիցէ ի վայր զմաղպմայն, ասելով ի թաթոկ.

Յիշատակ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Ապա մախրեալ զբաժանն, իաճանայն եկեացէ

կ' օրհնենք եւ կը փառաւորենք եւ օրհնութիւն եւ փառք կը մատուցանենք Քեզի՝ Հօր եւ Սուրբ Հոգիիդ Հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԸՆԾԱՅՈՒՄ

Հա-ապրայեալ - Դարձեալ խաղաղութեամբ
Տիրոջ աղաչենք: Ընդունէ՛, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

Պապարագիշը, «Կի՛հը Բանալով՝
Կը խաշահնի՛ն նշխարը ըսելով».

Պապարագիշ - Օրհնութիւն եւ փառք՝ Հօր
եւ ՈրդՔւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ
եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Է- ապա վար կը դնէ մաղպման, ըսելով
Ժաժո-կ.

Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի յիշատակը:

ՍԿԻՒԿԻՆ ներսը սրբելով՝ խորանին Յախ կողմը

ի Յակոբ Եղջի-ր սեղանոյ : Ապաստան-որն մարտ-ացե
զժամանոց Գրին-ոյ : Քաճանայն խաշանիշ արկցե
ի սկիւնն զԳրինին ասելով .

*Յաղագս յիշատակի փրկագործ սնօրէնու-
թեան Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի
Քրիստոսի :*

Եկեալ ի միջաբեղի սեղանոյ, մախրեացե զնե-
րն շրթո-նս Բաթակին, ե- երեալ զմաղղմայն ի
վերայ սկւոյ՝ խաշանիւնացե ե- նո-իրեացե, ե-
ապա յե-ացո-ացե զնշան խաշի, ասելով .

Աստուած, Աստուած մեր, որ զերկնաւոր
Հացդ, զՏէր մեր Յիսուս Քրիստոս, զկերա-
կուրդ ամենայն աշխարհի առաքեցեր փրկիչ
եւ կեցուցիչ եւ բարերար, օրհնել եւ սրբել
զմեզ : Ինքնին դու Տէր օրհնեա թ եւ այժմ զա-
ռաջագործութիւնս զայս : Ընկալ զա յերկնային
քո սեղանդ : Յիշեա որպէս բարերար եւ մար-
դասէր զմատուցողս եւ վասն որոց մատուցա-
նի : Եւ զմեզ անդատապարտ պահեա ի քահա-
նայագործութիւն աստուածային խորհրդոց
քոց : Չի սուրբ եւ փառաւոր է ամենապատիւ
մեծվայելչութիւն փառացդ Հօր եւ Որդ^Յւոյ եւ

կ'ո-ղղո-ի: Ապաստ-որը կը մատուցանէ Գինին: Ապա պատարագիչը Գինի կը լեցնէ «Կեանքի մեջ ըսելով».

Մեր Տիրոջ եւ Փրկչին Յիսուս Քրիստոսի փրկագործ սնտրէնութեան յիշատակին:

Ապա «Կեանքի ներշնչութիւն եղերէնը սրբելով՝ մաղրղ-ման կը դնէ «Կեանքի վրայ, կ'որհնէ զայն ե- կը նո-խրէ, ե- խաշի նշանը յե-սպր-նելով կ'ըսէ, Ժաժո-կ կամ Բարձր».

Աստուած, Աստուած մեր, որ երկնաւոր Հայր, մեր Տերը՝ Յիսուս Քրիստոս, ամբողջ աշխարհին սնունդ դրկեցիր, իբրեւ փրկիչ կենսատու եւ բարերար, մեզ օրհնելու ու սրբացնելու համար, Դուն ի՛նքդ, Տէր, օրհնէ Քայծմ-Քեզի մատուցուող այս ընծան: Ընդունէ զայն երկնաւոր խորանիդ վրայ: Եւ իբր բարերար եւ մարդասէր, յիշէ սնունք, որոնք կը մատուցանեն զայն եւ զանոնք՝ որոնց համար կը մատուցուի: Եւ անդատապարտ պահէ մեզ, երբ աստուածային խորհուրդներդ կը քահանայագործենք: Որովհետեւ սուրբ եւ փառաւոր է ամենապատիւ մեծ վայելչութիւնը

*Հողւոյդ սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից. ամէն:*

Աստուծոյն խաչանշանիցեաց զընթացն՝ ասելով.

*Հողին սուրբ եկեսցէ ի քեզ, եւ զօրութիւն
Բարձրելոյն Հովանի լիցի ի վերայ քո:*

ԺԱՄԱՐՈՒՏ

*Աստուծոյն խաչանշանիցեաց զընթացն՝ ի
յայն տեառնաբարեաց զընթացն:*

*Օրհնեալ թագաւորութիւն Հօր, ՈրդՅւոյ
եւ Հողւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւի-
տեանս յաւիտենից. ամէն:*

*Եւ Յիւնաստուծոյն խաչանշանիցեաց
զընթացն.*

*Աստուծոյն. Եւ եւս խաղաղութեան զՏէր
աղաչեսցուք. ընկալ կեցո եւ ողորմեա:*

փառքիդ, Հայր, Որդ՞ի եւ Սուրբ Հոգի,
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից.
ամէն:

Քահանան էր խաչակնիէ ընթաները, ըսելով.

Սուրբ Հոգին թող իջնէ վրագ եւ
Բարձրեալին զօրութիւնը հովանի թող ըլլայ
քեզի:

ԺԱՄԱՄՈՒՏ

Պատարագիչը էր Համբո՞րէ սեղանը, էր խա-
չակնիէ ինչպիսիք է- կ'ըսէ.

Օրհնեա՛լ է թագաւորութիւնը Հօր
Որդ՞իին եւ Սուրբ Հոգիին, այժմ եւ միշտ եւ
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եպա էր կարդայ օրո՞ւսյ
Ժամամո՞տը:

Հա՛ստատեալ - Դարձեալ խաղաղութեամբ
Տիրոջ աղաչէնք: Ընդունէ՛, Տէ՛ր, փրկէ՛ մեզ
եւ ողորմէ՛ մեզի:

Քաճանայն ԳեառնաԳրեալ զինին՝ Դարձցի
է- խաչակնիւսցէ զԺողովո-րդն.

Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդ^Յւոյ եւ
Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն Յ ամենեցուն:

Ապաստ-որն. Եւ ընդ Հոգւոյդ քում:

Քաճանայն. Աստուծոյ Երկրպագեսցուք:

Ապաստ-որն. Առաջի քո, Տէր:

Քաճանայն Գարաթեալ զՅեո-ս

ասասցէ.

Տէր Աստուած մեր, որոյ կարողութիւնդ
անքնին է, եւ փառքդ անհասանելի, որոյ ողոր-
մութիւնդ անչափ է, եւ գթութիւնդ անբաւ:
Դու ըստ առատ մարդասիրութեան քում,
նայեա ի Ժողովուրդս քո եւ ի տաճարս յայս
սուրբ: Եւ արա ընդ մեզ եւ ընդ աղօթակիցս
մեր առատապէս զողորմութիւն քո եւ զգթու-
թիւն: Չի քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ

Պատարագիչը ինչպիսիք էր խաչակնիչ, էր
դառնայ ժողովո-րդին է- կ'օրհնէ ըսելով:

Օրհնութիւն եւ փա՛ռք Հօր, ՈրդՔիին եւ
Սուրբ Հոգիին, այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն թ ամէնուն:

Հա-ապացեալ - Նա՛ւ եւ քու Հոգիիդ:

Պատարագիչ - Աստուծոյ երկրպագէսք:

Հա-ապացեալ - Քու առջեւդ, Տէ՛ր:

Պատարագիչը, յետ-էրը
դարածելով, կ'ըսէ.

Տէ՛ր Աստուած մեր, քու կարողութիւնդ
անքննելի է եւ փառքդ անհասանելի, ողորմու-
թիւնդ անչափ է եւ գթութիւնդ՝ անբաւ:
Դուն, քու առատաբուխ մարդասիրու-
թեամբդ, նայէ՛ այս ժողովուրդիդ եւ այս
սուրբ տաճարիդ եւ պարգեւէ՛ առատօրէն,
մեզի եւ մեր աղօթակիցներուն, ողորմութիւնդ
եւ գթութիւնդ: Որովհետեւ Քեզի՛ կը վայելէ
փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ՝ եւ

պատիւ. այժմ էլ միշտ էլ յաւիտեանս յաւիտե-
նից. ամէն:

Ի Զաճո-կ.

Որ Հասարակաց զայս էլ միաձայն մեզ
ամենեցուն ուսուցեր աղօթել, էլ զերկուց էլ
զերից միաձայնելոց յանուն քո զինդրուածս
պարգեւել խոստացար: Դու էլ այժմ զծառա-
յից քոց զինդրուածս՝ առ ի յօգուան կատա-
րեա, շնորհելով յայսմ յաւիտենիս զգիտու-
թիւն քումդ ճշմարտութեան, էլ ի Հանդեր-
ձեալն զկեանսն յաւիտենականսն պարգեւե-
լով: Չի բարերար էլ մարդասէր էս Աստուած.
էլ քեզ վայելէ փառք, իշխանութիւն էլ պա-
տիւ. այժմ էլ միշտ էլ յաւիտեանս յաւիտենից.
ամէն:

Տէր Աստուած մեր, որ կարգեցեր յերկինս
զդասս էլ զինուորութիւնս Հրեշտակաց էլ
Հրեշտակապետաց ի սպասաւորութիւն փա-
ռաց քոց: Արա այժմ ընդ մոլոսս մեր մտանել
էլ սրբոց Հրեշտակաց, էլ լինել պաշտօնակից
մեզ էլ փառաբանակից քումդ բարերարու-
թեանդ:

միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Պատարագիչը, Ժաժո-կ կամ Բարձր.

Դուն, որ բոլորիս սորվեցուցիր միասնաբար աղօթել եւ խոստացար Քու անունովդ Հաւաքուած երկու կամ երեք Հոգիներու խնդրանքը կատարել. կատարէ այժմ, Տէր, քու ծառաներուդ խնդրանքները իրենց օգուտին Համար եւ շնորհէ այս աշխարհիս մէջ ճշմարտութեանդ ճանաչումը, եւ գալիք աշխարհին մէջ յաւիտենական կեանք պարգեւէ անոնց: Որովհետեւ բարերար ու մարդասէր ես, Աստուած, եւ Քեզի կը փայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Տէր, Աստուած մեր, Դուն որ երկնքի մէջ Հրեշտակներուն ու Հրեշտակապետերուն կարգերը եւ գունդերը Հաստատեցիր՝ քու փառքիդ սպասաւորութեան Համար, տո՛ւր, Տէր, որ Հիմա սուրբ Հրեշտակնէ՛րն ալ մուտք գործեն մեզի Հետ եւ իրե՛նք ալ մասնակցին մեր պաշտամունքին եւ մեզի Հետ փառաբանեն քու բարերարութիւններդ:

ԵՐԵՔՍՐԵՆԱՆ ԵՐԳ

Չէոնանաճ ի Յայն.

Չի քո է կարողութիւն եւ զօրութիւն եւ
փառք յաւիտեանս. ամէն:

Սպասա-որն. Պուսիսո՛ւմէ:

Սուրբ Աստուած, սուրբ եւ Հզօր, սուրբ եւ
անմահ,

համ որ խաչեցար վանն մեր,

համ որ յարեար ի մեռելոց,

համ որ ծնար եւ յայտնեցար,

համ որ մարմնացար վանն մեր,

համ որ եկիր եւ գալոցդ ես,

համ որ Համբարձար փառօք առ Հայր,

համ որ եկիր եւ Հանգեար յառաքեալն,

համ որ յայտնեցար ի Թաբոր լերինն,

համ որ եկիր ի փոխումն Մօր քոյ եւ Աու-
սի,

ողորմեաց մեզ (երիցս):

ԵՐԵՔԱՐԲԵԱՆ ԵՐԳ

Պատարագիչը, յեռնամաթ է- Բարձրայայն.

Որովհետեւ քո՛ վիդ է կարողութիւնը, զօրութիւնը եւ փառքը՝ յաւիտեանս. ամէն:

Հա-ապրացեալ - Պուսիսո՛ւ մէ (ուշադի՛ր ըլլանք):

Սուրբ Աստուած, սուրբ եւ Հզօր, սուրբ եւ անմահ,

Կամ որ խաչուեցար մեզի Համար,

Կամ որ յարութիւն առիր մեռելներէն,

Կամ որ ծնար եւ յայտնուեցար,

Կամ որ մարմնացար մեզի Համար,

Կամ որ եկար եւ դարձեալ պիտի գաս,

Կամ որ փառքով Համբարձար Հօրդ քով,

Կամ որ եկար եւ Հանգչեցար առաքեալներուն վրայ,

Կամ որ յայտնուեցար Թաբոր լեռան վրայ,

Կամ որ եկար քու Մօրդ եւ Կոյսի Փոխանն օրը,

ողորմէ՛ մեզի (3 անգամ):

Քառանայն ի Չաճո-կ.

Աստուած սուրբ, որ ի սուրբս Հանգուցեալ ես, եւ երեքսրբեան ձայնիւ սերովբէք գովեն գրեզ, եւ քերովբէք փառաբանեն, եւ ամենայն երկնային զօրովթիւնքն քեզ երկիր պագանեն:

Որ ի չգոյէ ի գոյ ածեր զամենայն արարածս: Որ արարեր զմարդն ըստ պատկերի քում եւ նմանութեան, եւ ամենայն շնորհիւ քով զնա զարդարեցեր, եւ ուսուցեր խնդրել զիմաստութիւն եւ զզգօնութիւն. եւ ոչ անտես արարեր զմեղուցեալն, այլ եղեր ի վերայ նորա զապաշխարութիւն փրկութեան:

Որ արժանի արարեր զմեզ զնուաստացեալ եւ զանարժան ծառայքս քո ի ժամուս յայսմիկ կալ առաջի փառաց սրբութեան սեղանոյ քոյ, եւ զօրինաւոր երկրպագութիւն եւ զփառաբանութիւն մատուցանել քեզ:

Դու Տէր, ընկա՛լ ի բերանոյ մեղաւորացս գերեքսրբ- բեան օրհնութիւնս, եւ պահեա՛ զմեզ քոյին քաղցրութեամբդ:

Թող մեզ զամենայն յանցանս մեր զկամայ եւ զակամայ: Սրբեա զՀոգի, զմիտս եւ զմարմնս մեր. եւ շնորհեա ի սրբութեան պաշտել գրեզ զամենայն աւուրս կենաց մերոց. բարե-

Սո՛ւրբ Աստուած, որ սուրբերուն մէջ կը Հանգչիս, քեզ կը գովեն սերովբէները երեքսրբեան երգով, կը փառաբանեն քերովբէները եւ Քեզի կ'երկրպագեն երկնային զօրութիւնները:

Դո՛ւն, որ ոչինչէն գոյացուցիր բոլո՛ր արարածները եւ մարդը ստեղծեցիր պատկերիդ ու նմանութեանդ Համեմատ եւ զինք Քու բոլոր շնորհքներովդ զարդարեցիր, սորվեցուցիր անոր փնտռել իմաստութիւն ու զգօնութիւն եւ չանտեսեցիր զինք իր մեղանշէլէն ետք, այլ փրկարար ապաշխարութիւն մը դրիր իր վրայ:

Դո՛ւն, որ մեզ, անարժան եւ նուաստ ծառաներս, արժանի ըրիր կանգնելու այս պաշտօն քու սուրբ փառքիդ խորանին առջեւ եւ Քեզի մատուցանելու օրինաւոր երկրպագութիւն ու փառաբանութիւն:

Դո՛ւն, Տէ՛ր, ընդունէ՛ նաեւ երեքսրբեան այս օրհնութիւնը մեղաւորներու շրթունքներէն եւ պաՀէ՛ մեզ քու քաղցրութեամբդ:

Ներէ՛ մեզի՛ կամայ թէ ակամայ մեր բոլոր յանցանքները: Մաքրէ՛ մեր Հոգին, միտքն ու մարմինը, եւ շնորհէ՛, որ սրբութեամբ պաշտենք Քեզ մեր կեանքի բոլոր օրերուն, բարեխօսութեամբ Սուրբ Աստուածածնային եւ բոլոր

խօսութեամբ սրբուհոյ Աստուածածինն եւ ամենայն սրբոց քոց, որք յաւիտենից քեզ բարեհաճոյացան:

Չի սուրբ ես, Տէր Աստուած մեր, եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Բազկարարած.

Տէր Աստուած մեր, զբազկատարած զաղաչանս ծառայից քոց վերընկալցիս, եւ ողորմեցիս ըստ մեծի ողորմութեան քում: Չգթութիւն քո առաքեա ի վերայ մեր եւ ամենայն ժողովրդեանս, որք ակն ունին առ ի քէն առատ ողորմութեանդ:

Չեռնամած ի շայն.

Չի ողորմած եւ մարդասէր ես, Աստուած գոլով, եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԸՆԹԵՐՅՈՒՄ ՍՈՒՐԲ ԳԻՈՅ

Ասացեալ ըստ խորհրդոյ առն Սաղմոսն,

սուրբերուդ, որոնք ի յաւիտենից Քեզի Հաճե-
լի եղան:

Որովհետեւ Դուն սո՛ւրբ ես, Տէ՛ր Աստուած մեր, եւ Քեզի՛ կը վայելէ փառք, իշխա-
նութիւն եւ պատիւ, այժմ՝ եւ միշտ եւ յաւի-
տեանս յաւիտենից. ամէն:

Չեռ-չեբը Գարածէլով.

Աստուած մեր, ընդունէ՛ քու ծառաներուդ
այս բազկատարած աղաչանքները եւ գթա՛
անոնց քու մեծ գթասարտութեամբդ: Տարածէ՛
գութդ մեր եւ ամբողջ այս ժողովուրդին վրայ,
որ առատ ողորմութիւն կ'ակնկալէ Քեզմէ:

Չեռ-նամաժ, Բարչրայայն.

Որովհետեւ Աստուած ըլլալով՝ բարեգութ
ու մարդասէր ես, եւ Քեզի կը վայելէ փառք,
իշխանութիւն եւ պատիւ, այժմ՝ եւ միշտ եւ յա-
ւիտեանս յաւիտենից. ամէն:

ԸՆԹԵՐՅՈՒՄ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԵՆՈՒ

Օրո՛ւայ խորհո՛րդին Համէ՛մաք Սաղմոսը

ընթերցողի պահանջներն առաջնություն էն ունենում
- ուր պահանջները պահանջներ են :

Այսպես-որն. Ալեքսան, Օրթի:

Քանակապես դարձեալ՝ խորհրդարանի-ն
խառնակեցեալ պահանջները-

Խաղաղութիւն թ ամենեցուն:

Այսպես-որն. Եւ ընդ Հոգւոյդ քում:

Երկիրը անուշաբուր լուսարուք:

Քանակապես. Սրբոյ Աւետարանիս որ ըստ
(Մատթէոսի կամ Մարկոսի կամ Ղուկասու
կամ Յովհաննու):

**Այսպես-որն. Փառք քեզ, Տէր Աստուած
մեր: Պաշտօնում: Ասէ Աստուած:**

Քանակապես պետք է խորհրդարանի պահանջները,
պահանջներն են, եւ յառաջիկան Համբար-նում է-

կ'ըստ-ի, աստ կը կարդացո-ի աստեւեւան
Թո-ղթը ե- կ'ըստ-ի աս-ր պարշաճի Ելեւո-ի-
ան :

Հասարակեալ - Ալեւիա. Օրթի (ուղի դ
կենանք):

Պարարագիշը կ'օրհնէ ժողովո-րդը Ե-եպա-
րանով:

Խաղաղութի ն ջ ամենուն:

Հասարակեալ - Նաեւ քու Հողիի դ:

Երկիւղածութեամբ մտիկ ընենք:

Պարարագիշ - Սուրբ Աւետարանին՝ ըստ
(Մատթեոսի կամ Մարկոսի կամ Ղուկասի
կամ Յովհաննէսի):

Հասարակեալ - Փա՛ռք Քեզի, Տէ՛ր Աս-
տուած մեր: Պուսխումէ (ուշագի՛ր ըլլանք):
Աստուա՛ծ կը խօսի:

Պարարագիշը, ինչպիսիք խաչանկէտէ ետե՛,
կը կարդայ Ե-եպարանը, աստ զայն Համբո-րե-

խփեալ՝ դարձցի առ խորանն :

Ապաստորն. Փառք Քեզ, Տէր, Աստուած մեր:

Քաճանայն եղեալ զխորհրդադեպրն յառաջին գեղո֊ոջ, Յեռնամաշ, առասցէ ի Յայն.

ՀԱՄԱՏԱՐ

Հաւատալք ի մի Աստուած Հայրն ամենակալ յարարիչն երկնի եւ երկրի՝ երեւելեաց եւ աներեւոյթից:

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, Որդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին, այսինքն յեւթմենէ Հօր:

Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ եւ ոչ արարած:

Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի՝ երեւելիք եւ աներեւոյթք:

Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան, իջեալ ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ Կուսէն՝ Հոգւովն Սրբով: Որով էառ

ձէ եւ - փակելէ ետքէ կը դառնան զէպի սեղան :

Հասարակեալ - Փա՛ւք Քեզի, Տէ՛ր, մեր
Աստուա՛ծը:

Քաճանան, Ա-եղարանը նախկին տեղը դնել-
լով՝ յեռնամաս, Ժողովո-րդին հետ Բարձրա-
յայն կ'ըսէ.

ՀԱՄԱՍՄՔ

Կը Հաւատանք մէկ Աստուծոյ՝ ամենակալ
Հօր, որ արարիչն է երկնքի եւ երկրի, տեսա-
նելի եւ անտեսանելի արարածներուն:

Եւ մէկ Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի, Աս-
տուծոյ Որդիին, ծնած Հօր Աստուծմէ Միա-
ծին, այսինքն՝ Հօր էութենէն:

Աստուա՛ծ Աստուծմէ, Լո՛յս Լոյսէն, ճշմա-
րի՛ տ Աստուած ճշմարի՛ տ Աստուծմէ, ծնած եւ
ոչ թէ ստեղծուած:

Նոյն ի՛նքը՝ Հօր բնութենէն, որով ստեղ-
ծուեցաւ ամէն բան, տեսանելի եւ անտեսանե-
լի, երկնքի մէջ եւ երկրի վրայ:

Որ մեզի՛ մարդոցս եւ մեր փրկութեան Հա-
մար իջաւ երկինքէն, մարմնացաւ, մարդացաւ,
ծնաւ կատարեալապէս Սուրբ Կոյս Մարիամէն՝
Սուրբ Հոգիին զօրութեամբ, որմէ առաւ մար-

մարմին, Հոգի եւ միտս, եւ զամենայն որ ինչ է
ի մարդ, ճշմարտապէս եւ ոչ կարծեօք:

Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ
աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին
մարմնովն, նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է
նովին մարմնովն եւ փառօք Հօրի դատել
զկենդանիս եւ զմեռեալս: Որոյ թագաւորու-
թեանն՝ ոչ գոյ վախճան:

Հաւատամք եւ ի սուրբ Հոգին՝ յանեղն եւ
ի կատարեալն: Որ խօսեցաւ յօրէնս եւ ի մար-
գարէս եւ Սէտտարանս: Որ էջն ի Յորդանանս,
քարոզեաց յառաքեալնս եւ բնակեցաւ ի
սուրբնս:

Հաւատամք եւ ի մի միայն յրնդՀանրական
եւ յառաքելական սուրբ Եկեղեցի: Ի մի
մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն
եւ ի թողութիւն մեղաց: Ի յարութիւն մեռելոց:
Ի դատաստանն յաւիտենից, Հոգւոց եւ
մարմնոց: Յարքայութիւնն երկնից: Եւ ի
կեաննս յաւիտենականս:

Եւ Համբողջեալ զսեղանն՝ ԳեառնաԳրեացե-
լինին, ասելով.

Իսկ մէք փառաւորեսցուք, որ յառաջ քան
զյաւիտեանս, երկիր պագանելով սրբոյ Եր-

մին, Հոգի, միտք եւ ամէն ինչ որ կայ մարդուն մէջ, ճշմարտապէս եւ ո՛չ թէ երեւութապէս:

Չարչարուեցաւ, խաշուեցաւ, թաղուեցաւ, երրորդ օրը յարութիւն առաւ, նոյն մարմնով երկինք ելաւ, նստաւ Հօր աջակողմը. դարձեալ պիտի դայ նոյն մարմնով ու Հօր փառքով, դատելու Համար ողջերն ու մեռեալները: Եւ անոր թագաւորութիւնը վերջ պիտի չունենայ:

Կը Հաւատանք նաեւ Սուրբ Հոգիին, որ անստեղծ եւ կատարեալ է, որ խօսեցաւ Օրէնքներուն, Մարգարէներուն եւ Աւետարանին միջոցաւ, որ իջաւ Յորդանան, քարոզեց առաքեալներուն եւ բնակեցաւ սուրբերուն մէջ:

Կը Հաւատանք միայն մէկ, ընդհանրակա՛ն եւ առաքելական սո՛ւրբ Եկեղեցիին: Մէկ մկրտութեան, ապաշխարութեան, մեղքերու քաւութեան եւ թողութեան, մեռեալներու յարութեան, Հոգիներու ու մարմիններու վերջին դաստաստանին, երկինքի արքայութեան եւ յաւիտենական կեանքին:

Պատարագիչը «եղանը Համբո՛-րելով՝ ինչ-պինչը կը խաշակընչէ ըսելով».

Իսկ մենք՝ փառաւորենք Սուրբ Երրորդութիւնն ու Մէկ Աստուածութիւնը, որ յաւիտե-

բորդութեանն եւ մի աստուածութեանն Հօր
եւ Որդի^Յւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ՝ եւ միշտ
եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Տարաձեւալ յե-օ՛ղ ասասցէ
ի թաճո-կ.

Տէ՛ր մեր եւ փրկիչ Յիսուս Քրիստոս, որ
մեծդ եւ ողորմութեամբ, եւ առատ պարգեւօք
բարերարութեան քոյ: Որ դու քոյին կամաւ ի
ժամուս յայսմիկ Համբերեցեր չարչարանաց,
խաչի, եւ մահո՞ն յաղագս մեղաց մերոց. եւ
պարգեւեցեր առատապէս զպարգեւս Հոգ-
ւոյդ սրբոյ երանելի առաքելոցն: Հաղորդս
արա եւ զմեզ Տէր, աղաչեմք գրեզ՝ աստուա-
ծային պարգեւացդ, թողութեան մեղաց եւ ըն-
դունելութեան Հոգւոյդ սրբոյ:

Ապա ի յայն յե-նանաճ, ե- դարձեալ՝ խա-
չանի՛վեացէ զժողովո-րդն.

Որպէս զի արժանաւորք եղիցուք գոհու-
թեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ
սրբոյ Հոգւոյդ. այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

նութենէն առաջ է, երկրպագելով Հօր, Որդ^Յիին եւ Սուրբ Հոգիին, այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Պատարագիչը պարաշելով յեռ-կերը կ'ըսէ, թա-
ժո-կ կամ Բարձր.

Տէ՛ր մեր եւ փրկիչ Յիսուս Քրիստո՛ս, որ մե՛ծ ես ողորմութեամբդ եւ առատաձեռն՝ բարերարութեանդ պարգեւներով, որ այս ժամուս կամովին Համբերեցիր չարչարանքներուն, խաչելութեան եւ մահուան՝ մեր մեղքերուն Համար, եւ առատօրէն բաշխեցիր Սուրբ Հոգիիդ պարգեւները երանելի Առաքեալներուն, կ'աղաչե՛նք Քեզի, Տէ՛ր, մե՛զ ալ Հաղորդակից ըրէ՛ քու աստուածային պարգեւներուդ, մեղքերու թողութեան եւ Սուրբ Հոգիիդ ընդունելութեան:

Եպա, Պատարագիչը օրհնելով ժողովո՛րդը, կ'ըսէ, Բարձր.

Որպէսզի արժանի ըլլանք գոհութեամբ փառաւորելու Քեզ՝ Հօր եւ Սուրբ Հոգիիդ Հետ: Այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն թ ամենեցուն:

Ապաստանորն. Եւ ընդ Հոգւոյդ քում:

Քաճանայն. Աստուծոյ Երկրպագեսցուք:

Ապաստանորն. Առաջի քո, Տէր:

Եպա Գարաթեալ զՅէոս.

Խաղաղութեամբ քով, Քրիստոս փրկիչ մեր, որ ի վեր է քան զամենայն միտս եւ զբանս, ամրացո զմեզ եւ աներկիւղ պաշէա յամենայն չարէ: Հաւասարեա զմեզ ընդ ճշմարիտ Երկրպագուա քո, որք Հոգւով եւ ճշմարտութեամբ քեզ Երկիր պագաննն: Վասն զի ամենասուրբ Երրորդութեանդ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Տեառնագրեացէ զԻնձն.

Օրհնեալ Տէր մեր Յիսուս թ Քրիստոս:

Ապաստանորն. Ամէն:

Խաղաղութի՛ն ֆ ամէնուն:

Հա-ասրացեալ - Նաե՛ւ քու Հոգիիդ:

Պարարա՞ծիչ - Աստուծոյ երկրպագենք:

Հա-ասրացեալ - Քու առջեւ, Տէ՛ր:

Պարարա՞ծիչ յե-՛նդ զարածելով.

Քրիստո՛ս, փրկիչ մեր, խաղաղութեամբդ՝
որ կը գերազանցէ ամէն միտք եւ խօսք, ամ-
րացո՛ւր մեզ եւ աներկի՛ւղ պահէ՛ ամէն չարի-
քէ: Հաւասա՛ր դասէ մեզ Քու ճշմարիտ
երկրպագուներուդ հետ, որոնք Հոգիով եւ
ճշմարտութեամբ կ'երկրպագեն Քեզի, որով-
հետեւ Ամենասուրբ Երրորդութեա՛նդ կը վա-
յելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ՝ եւ
միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ին՛չպի՛նչը խաշակն՛չելով.

Օրհնեա՛լ է մեր Տէրը, Յիսուս ֆ Քրիս-
տոս:

Հա-ասրացեալ - Ամէն:

Քաճանայն կողմնակի դարձեալ՝ խաշակնէն-
ցէ պժողովո՞րդն.

Տէր Աստուած օրհնեսցէ զամենեսեանդ:

Սպասա՞որն. Ամէն:

ՀԱՒԱՏԱՅԵԼՈՅ ՊԱՏԱՐԱԳ

Բացաբլո՞խ է- յէռնամաշ խոնարհեցո՞-
ցեալ պբլո՞խն, պճեռ-ս յեցո՞սցէ ի թնօր սեղա-
նոյն է- աղօթե՞սցէ ի թաթո՞կ.

Ոչ որ արժանի է յրմբոնելոցս մարմնաւոր
ախտիք եւ ցանկութեամբ մատչել ի սեղան
քո, կամ սպասաւորել արքունական փառաց
քոց. քանզի պաշտել գբեզ՝ մեծ եւ ահաւոր
երկնաւոր զօրութեանցդ իսկ է: Սակայն վասն
անչափ բարերարութեան քոյ, անպարագրելի
Բանդ Հօր, եղեր մարդ, եւ քահանայապետ
մեր երեւեցար: Եւ իբր Տէր ամենեցուն՝ այսմ
սպասաւորութեան եւ անարիւն զենման գբա-
հանայութիւն աւանդեցեր մեզ: Վասն զի դու
ես Տէր Աստուած մեր, որ տիրես երկնաւորաց
եւ երկրաւորաց: Որ ի վերայ քերովբեական

Պատարագիչը, կողմնակի դատանալով կ'օրհնէ
Ժողովո՛րդը եւ կ'ըսէ.

Տէր Աստուա՛ծ թող օրհնէ Ք ձեզ ամէնքդ:

Հա՛ւատարացեալ - Ամէն:

ՀԱՒԱՏԱՅԵԱԼՆԵՐՈՒ ՊԱՏԱՐԱԳ

Պատարագիչը, յեռնամաժ, Գլո՛խը խոնար-
հաժ եւ յեռ՛կերը յեցաժ խորանի եզեր՛իին,
կ'ըսէ, ժաժո՛ւկ կամ Բարձր.

Մարմնաւոր ախտերով եւ ցանկութիւննե-
րով վարակւածներէս ո՛չ մէկը արժանի է քու
սեղանիդ մերձենալու կամ Քու արքայական
փառքիդ սպասաւորելու, որովհետեւ Քեզի
ճառայելը երկնային, մեծ ու ահաւոր զօրու-
թիւններո՛ւն միայն յատուկ է: Սակայն Դուն՝
Հօր անբովանդակելի Խօ՛սքը, քու անսահման
բարերարութեամբդ մարդ եղար եւ մեր քա-
հանայապետը Հանդիսացար: Եւ իբր Տէրը բո-
լորին՝ այս պաշտամունքին եւ անարին զրհա-
բերումին քահանայութիւնը աւանդեցիր մեզի:
Որովհետեւ Դո՛ւն ես մեր Տէր Աստուածը, որ

աթոռոյ բազմիս, սերովբէից Տէր եւ թագաւոր Իսրայէլի: Որ միայն սուրբ ես, եւ ի սուրբս Հանգուցեալ: Աղաչեմ գրեզ, միայն բարերար, նայեա յիս ի մեղուցեալ եւ յանպիտան ծառայս քո, եւ սրբեա զՀոգի եւ զմիտս իմ՝ յամենայն պղծութենէ չարին: Եւ բաւականացո զիս զօրովթեամբ սուրբ Հոգւոյդ, որ զգեցեալ եմ գրաՀանայականս շնորհ, կալ առաջի սրբոյ սեղանոյս, եւ քահանայագործել գքո անարատ մարմինդ եւ զպատական արինդդ:

Առաւել եւս խոնարհեացի
Երկրպագո-թեամբ.

Քեզ խոնարհեցուցեալ զպարանոցս իմ,
մաղթեմ՝ մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն,
եւ մի՛ մերժեր զիս ի ծառայից քոց:

Վերացո-ցեալ զէօղն եւ զկափարիշն, եւ
կալեալ զակեհն նո-խրեացէ.

Այլ արժանի արա մատուցանել քեզ զըն-
ծայս զայս՝ յինէն ի մեղուցեալ եւ յանարժանս

կը տիրես երկնաւորներուն եւ երկրաւորներուն, որ կը բազմիս քերովբեական ամօռի վրայ, սերովբէներու Տէր եւ թագաւոր Իսրայէլի, Դո՛ւն որ միա՛կ սուրբն ես եւ սուրբերուն մէջ կը Հանգչիս, կ'աղաչեմ՝ Քեզի, միա՛կ բարերար եւ Հեշտալուր, նայէ՛ ինձի, մեղաւոր եւ անարժան ծառայիդ, եւ մաքրէ՛ իմ Հոգիս ու միտքս չարին բոլոր պղծութիւններէն: Եւ Սուրբ Հոգիիդ զօրութեամբ արժանի ըրէ՛ զիս, որ քահանայական շնորհքը զգեցած եմ, կանգնելու այս սուրբ սեղանիդ առջեւ եւ քահանայագործելու քու անարատ Մարմինդ եւ սպասուական Արիւնդ:

Պարարագիշչը, ա-եւի խոնարհելով, կ'երկրպագէ ըսելով.

Գլուխս խոնարհեցնելով Քու առջեւդ, կ'աղաչեմ, մի՛ դարձներ երեսդ ինձմէ եւ մի՛ մերժեր զիս ծառաներուդ շարքէն:

Վերցնելով խօղն ու կարագիշչը եւ սկիւռը Բարձրացնելով՝ պայն կը նս-իբէ ըսելով.

Այլ արժանի ըրէ՛ զիս, քու մեղաւոր եւ անարժան ծառայդ՝ այս ընծաները մատուցա-

ծառայէս քումնէ: Վասն զի դու ես՝ որ մատուցանես եւ մատչիս եւ ընդունիս եւ տաս, Քրիստոս Աստուած մեր: Եւ քեզ փառս մատուցանեմք, Հանդերձ անսկիզբն Հարբդ, եւ ամենասուրբ եւ բարերար Հոգւովդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԸՆԾԱՅԱԲԵՐՈՒՄՆ

Այս գրիցէ զմաղպմայն առաջի ի-ր, ե-զկա-փարիշն ածցէ ի վերայ Բաժակին, ե-ւ լո-ասցի զՅե-ս ի Յախ եղջեր սեղանոյ, ասելով.

Լուսցայց սրբութեամբ զձեռս իմ, եւ շուրջ եղէց զսեղանով քով:

Բազկարարած ասացէ զաղօթս.

Տէր Աստուած զօրութեանց եւ արարիչ ամենայն լինելութեանց, որ յանելութենէ զբնաւս ի ցուցակութիւն ածեալ գոյացուցեր: Որ եւ զմեր զհողեղէն բնութիւնս այսպիսի ահաւոր եւ անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս: Դու Տէր՝ որում պատարագեմք զպատարագիսս, ընկալ առ ի մէնջ զառա-

ներու Քեզի, որովհետեւ Դո՛ւն ես որ կը զոհես
ու կը զոհուիս, կ'ընդունիս եւ կու տաս, Քրիս-
տո՛ս Աստուած մեր, եւ Քեզի՛ փառք կու
տանք, անսկիզբ Հօրդ ու բարերար եւ ամե-
նասուրբ Հոգիիդ Հետ, այժմ՝ եւ միշտ եւ յա-
ւիտեանս յաւիտենից. ամէն:

ԸՆԾԱՅԱԲԵՐՈՒՄ

Պատարագիչը մաղչման կը հանէ, «կե՛հը
կափարեշո՛վ կը թաթկէ ե- յե-վերը կը լո-սյ
ըսելով, թաթո-կ կամ Բարձր.

Սրբութեամբ պիտի լուամ՝ ձեռքերս եւ խո-
րանիդ շուրջը պիտի դառնամ:

Ապա Բազկատարած կ'աղօթէ.

Տէր Աստուա՛ծ զօրութիւններու եւ Արարիչ
բոլո՛ր էութիւններու, որ արարածները ոչինչէ
գոյացնելով տեսանելի դարձուցիր եւ մեր Հո-
ղածին բնութիւնն ալ մարդասիրապէս պա-
տուելով այսպիսի ահաւոր անպատմելի Խոր-
Հուրդի պաշտօնեայ կարգեցիր: Դո՛ւն, Տէ՛ր,
որու կը մատուցանենք պատարագի այս ըն-

Չադրութիւնս զայս: Եւ աւարտեա զսա ի
խորհրդ-րդականութիւն մարմնոյ եւ արեան
Միաձնի քոյ: Դեղ թողութեան մեղաց պար-
գեւեա ճաշակողացս զհացս զայս եւ զբա-
ժակս:

Չեռնամաժ ի շայն.

Շտորհօք եւ մարդասիրութեամբ Տեան
մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ
որում քեզ Հօր՝ միանգամայն եւ հոգւոյդ
սրբոյ՝ վայելէ փառք, իշխանութիւն եւ պա-
տիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից.
ամէն:

Համբո՛րեալ զսեղանն խաշակն՝ էսցէ զժողո՛-
վո՛րդն.

Խաղաղութիւն ✠ ամենեցուն:

Սպասս-որն. Եւ ընդ հոգւոյդ քում:

Քա՛հանայն. Աստուծոյ երկրպագեսցուք:

Սպասս-որն. Առաջի քո Տէր:

ծաները, ընդունել մեր այս նուիրաբերումը եւ կատարելագործել՝ զայն, փոխակերպելով քու Միածինիդ Մարմինի եւ Արինի խորհուրդին: Եւ այս Հայն ու բաժակը պարզեւէ՛ ճաշակողներուս իբր դեղ՝ մեղքերու թողութեան Համար:

Ապա, յեռնամաժ, կը շարոնակէ՛ Բարձր.

Շտորժքով եւ մարդասիրութեամբ մեր Տիրոջ եւ փրկչին Յիսուս Քրիստոսի, որուն Հետ Քեզի՛ Հայր, Սուրբ Հոգիո՛վը միասին՝ կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սեղանը Համբո՛ւրելէ ետէ՛, կ'օրհնէ ժողովո՛րը
Դը ըսելով.

Խաղաղութիւն ✠ ամէնուն:

Հա-ապացեալ - Նաե՛ւ քու Հոգիիդ:

Պապարագիշ - Աստուծոյ երկրպագենք:

Հա-ապացեալ - Քու առջեւդ, Տէր:

Քաճանայն յեռնամաթ ասացէ.

Ողջոյն տուք միմիանց, ի Համբոյր սրբութեան: Եւ որք ոչ էք կարող Հաղորդել աստուածային խորհրդոյս եւ առ դրոնս էք, աղօթեցէք:

Ապաստորն. Քրիստոս ի մէջ մեր յայսնեսցի,

Որ Էնն Աստուած աստ բազմեսցի:

Խաղաղութեան ձայն Հնչեցաւ,

Սուրբ ողջունիս Հրաման տուաւ:

Եկեղեցիս մի անձս եղէւ,

Համբոյրս յօդ լրման տուաւ:

Թշնամութիւնն Հեռացաւ,

Սէր ընդՀանուրս սիրեցաւ:

Քաճանայն Գարածեալ զՅեռն.

ԱՀիւ կացցուք, երկիւղիւ կացցուք, բարութք կացցուք, եւ նայեցարուք զգուշութեամբ:

Ապաստորն. Առ քեզ, Աստուած:

Քաճանայն. Պատարագ Քրիստոս մատչի
Գառն Աստուծոյ:

Պարարագիշը յեռնամաթ կ'ըսէ.

Ողջոյն տուէ՛ք իրարու սուրբ Համբոյրով:
Իսկ դուք որ կարող չէք Հաղորդուիլ այս աս-
տուածային Խորհուրդին եւ դրան մօտ էք,
աղօթեցէք:

Հա-ապրացեալ - Քրիստոս մեր մէջ յայտ-
նուեցաւ,

Ի՛նքն Աստուած Հոս բազմեցաւ,

Խաղաղութեան ձայն բարձրացաւ,

Սուրբ ողջոյնիս հրամանն տրուեցաւ:

Եկեղեցիս մէկ անձ եղաւ,

Այս Համբոյրը իբր լրումի զօր տրուեցաւ,

Թշնամութիւնը Հեռացաւ,

Սէրն ամէն կողմ սիրուեցաւ:

Պարարագիշ, յեռ-էերը Կարածելով.

Վախով կենանք, երկիւղածութեամբ կե-
նանք, սպառշածօրէն կենանք եւ ուշադրու-
թեա՛ մք նայինք:

Հա-ապրացեալ - Դէպի Քէ՛զ, Աստուած:

Պարարագիշ - Քրիստոս՝ Աստուծոյ անարատ
Գառնուկը կը մատուցուի իբրեւ սպասարագ:

Սպասաս-որն. Ողորմութիւն եւ խաղաղութիւն եւ պատարագ օրհնութեան:

Քաճանայն որեւո՞նա՞գրեացե՞ պի՞ն՛ի, է- յե- նամա՞ ի որդմնակի դարձեալ՝ խաշակն՛իւցե՞ պժ- ողոր-րդն.

Հնորհք, սէր եւ աստուածային սրբարար գորութիւնն Հօր եւ Որդ^Յւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, եղիցի ընդ ձեզ ^Յ ընդ ամենեսեան:

Սպասաս-որն. Ամէն. եւ ընդ Հոգւոյդ քում:

Քաճանայն ցարա՞թեալ պճե-ս՝ ամբարձցե՞ պաշս ի խաշելո-րի-նն՝ յասելն միայն.

Ի վեր ընծայեցուցէք զմիտս ձեր աստուածային երկիւղիւ:

Սպասաս-որն. Ոնիմք առ քեզ, Տէր ամենակալ:

Քաճանայն. Եւ գոհացարուք զՏեառնէ բորրով սրտիւ:

Սպասաս-որն. Արժան եւ իրաւ:

Հա-ապրայեալ - Ողորմութիւն, խաղաղութիւն եւ օրհնութեան պատարագ:

Պապարագիչը ինչպիսիք էր խաչակնիկ ե-
կողմնակի դառնալով՝ կ'օրհնէ ժողովո-րոջը,
ըսելով:

Հնորհքը, սերը եւ աստուածային սրբարար
զօրութիւնը՝ Հօր, Որդի՞իս եւ Սուրբ Հոգի-
ին, թող ըլլայ ձեր թ ամէսուն հետ:

Հա-ապրայեալ - Ամէն: Նա՛ եւ քու Հոգիիդ
հետ:

Պապարագիչը, յետ-իւրը դարձելով ե-
տէրը ո-ղջելով խաչին կ'ըսէ:

Դեպի վե՛ր բարձրացուցէք ձեր միտքերը,
աստուածային երկիւղով:

Հա-ապրայեալ - Քեզի կը բարձրացնէք
մեր միտքերը, ամենակա՛լ Տէր:

Պապարագիչ - Եւ գոհութիւն մատուցէք
Տիրոջ, ամբողջ սրտով:

Հա-ապրայեալ - Արժանի՛ է եւ արդա՛ր:

ՆԱԽԱՄՈՒՏ ԿԱՆՈՆԻ

Քաճանայն յէռնամաթ աղօթեացէ
ի շաշոնկ.

Արժան է ստուգապէս եւ իրաւ ամենայոր-
դոր փութով միշտ երկիր պագանելով փառա-
ւորել զքեզ, Հայր ամենակալ: Որ քոյին
անգննելի եւ արարչակից Բանիւղ՝ զանիծիցն
բարձեր զկրճիմն: Որ ժողովուրդ ինքեան առ-
եալ զեկեղեցի՝ սեպհականեաց զհաւատա-
ցեալս ի քեզ: Եւ գննելի բնութեամբ ըստ ի
Կուսէն սնտեսութեան Հաճեցաւ բնակել ի
մեզ: Եւ նորագործ աստուածապէս ճարտա-
րապետեալ զերկիրս երկին արար: Վասն զի
որում ոչն Հանդուրժէին առաջի կալ
զուարթնոցն ջոկք՝ զարհուրեալք ի փայլակ-
նացայտ եւ յանմատոյց ըւտոյ աստուածու-
թեանդ, եղեալ այդպիսիդ մարդ յաղագս մե-
րոյ փրկութեան, շնորհեաց մեզ ընդ երկնա-
յինսն պարել զհոգեղէն պարս:

Զերկոսին յէռն եղեալ ի վերայ սկզոյ ասասցէ
ի յայն.

Եւ ընդ սերովբեան եւ ընդ քերովբեան միա-

ՆԱԽԱՄՈՒՏ ԿԱՆՈՆԻ

Պատարագիչը, յեռնամառ, թաթոս-կ կամ
Բարձր կ'աղօթէ.

Արժանի է ստուգապէս եւ արդար՝ ամենա-
ջերմ եռանդով միշտ երկրպագելով՝ փառա-
ւորել Քեզ, Հայր ամենակալ, որ քու անգննե-
լի եւ արարչակից Որդիիդ ձեռքով ջնջեցիր
անէծքի պատիժը: Որ Եկեղեցին իբր ժողո-
վուրդ ընտրելով, իրեն սեփականութիւն դար-
ձուց անոնց, որոնց Քեզի կը Հաւատան, եւ
տեսանելի բնութեամբ՝ մարմնանալով Սուրբ
Կոյս Մարիամէն, Հաճեցաւ մեր մէջ բնակիլ
եւ աստուածային նորաստեղծ ճարտարապե-
տութեամբ երկիրը երկինք դարձուց: Որովհե-
տեւ Ան, որուն առջեւ Հրեշտակներու գունդե-
րը աստուածային փայլատակող եւ անմատչե-
լի լոյսէն սարսափած չէին Համարձակեր
կանգնիլ, մարդացաւ մեր փրկութեան Համար
եւ մեզի շնորհեց երկնային էակներուն Հետ Հո-
գեւոր պարեր պարել:

Երկոս- յեռ-իւրը «կի՛հին վրայ դնելով» Բարձր
կ'ըսէ.

Եւ սերովբէներուն ու քերովբէներուն Հետ՝

ձայն սրբասացութեամբ յօրինել նուագս, եւ
Համարձակապէս գոչելով աղաղակել ընդ նո-
սին եւ ասել.

Ձ Յէ՛ո՝ս շո՛ւրջ ասէ՛ալ զընծայի՛նք, Յէ՛ո՝նամաթ
խոնարհեալ՝ ասասցէ՛.

Սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց, լի
են երկինք եւ երկիր փառօք քո, օրհնութիւն ի
բարձունս: Օրհնեա՛լ որ եկիր եւ գալոցդ ես
անուամբ Տեառն. ովսաննա ի բարձունս:

ԿԱՆՈՆ

Երիցս խաչակնիւնցէ ի վերայ ընծայից ե-
բազկաբարաս շաղօթեացէ ի ծածոնկ.

Սուրբ Ռ, սուրբ Ռ, սուրբ Ռ ես ճշմարտա-
պէս եւ ամենասուրբ. եւ ո՛վ դք պանծասցի բո-
վանդակել բանիւ զքո ի մեծ զանբաւ բարեգո-
րովութեանդ զեղմունս: Որ եւ անդէն իսկ ի
նախնուամն զանկեայն ընդ մեղօք՝ զանազան
եղանակօք խնամեալ սփոփեցեր՝ մարգարե-
իւք, օրինացն տուչութեամբ, քաշանայու-
թեամբ եւ ստուերակերպ երնջոցն մատուց-
մամբ: Իսկ ի վախճան աւուրցս այսոցիկ զբո-

միաձայն սրբասացութեամբ նուագներ եղա-
նակել եւ Համարձակօրէն գոչելով՝ անոնց
Հետ աղաղակել եւ ըսել.

Ապա կը խոնարհի, Յեռնամաժ.

Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ ես, զօրութիւններո՛ւ
Տէր. երկինքն ու երկիրը լի են քու փառքովը:
Օրհնութի՛ն բարձունքներու մէջ: Օրհնեա՛լ
ես դուն որ եկար ու պիտի գաս Տիրոջ անու-
նով: Ովսաննա՛ բարձունքներու մէջ:

ԿԱՆՈՆ

Պապարագիշը Բազկապարաժ կ'աղօթէ, թա-
ժո՛ւկ կամ Բարձր.

Սո՛ւրբ ✠, սո՛ւրբ ✠, սո՛ւրբ ✠ ես ճշմար-
տապէս եւ ամենասուրբ. եւ ո՛վ կրնայ պարծե-
նալ թէ կարող է խօսքերով ամփոփել քու ան-
սահման գորովանքիդ զեղումները մեր վրայ:
Դուն արդէն, սկիզբէն՝ մեղքի մէջ ինկած
մարդը զանազան կերպերով խնամելով սիո-
փեցիր՝ մարգարէներով, օրէնքի տուչութեամբ,
քահանայութեամբ եւ երինջներու խորհրդա-
կան զոհաբերումով: Իսկ ժամանակներու

վանդակ իսկ զպարտեաց մերոց խզեալ զդատակնիք, ետուր մեզ զՈրդիդ քո միածին՝ պարտապան եւ պարտս, զենումն եւ օծեալ, գառն եւ երկնաւոր Հաց, քաւանայապետ եւ պատարագ: Վասն զի ինքնդ է բաշխող, եւ նոյն ինքն բաշխի ի միջի մերում միշտ անծախապէս: Վասն զի եղեալ Հաւաստեալ եւ առանց ցնորից մարդ, եւ անշիտթ միաւորութեամբ մարմնացեալ յԱստուածածին եւ ի սուրբ Կռաէն Մարիամայ: Հանապարհորդեաց ընդ ամենայն կիրս մարդկային կենցաղոյս առանց մեղաց, եւ յաշխարհակեցոյց եւ յառիթն փրկութեան մերոյ եկեալ կամաւ ի խաչն:

ՍՐԲԱԳՈՐԾՈՒՄ

Եսորէն պարապէսցի վայր մի ի Ըոգեոր խորհրդաթռ-լի-նս. ապա առեալ զնշխարն խաչակնիկեացէ, եւ ամբարշտել զաշորն ի խաչելո-լի-ն՝ ասելով ի թաթոկ:

Առեալ զՀացն՝ ի սուրբ, յաստուածային, յանարատ եւ ի պատուական ձեռս իւր. օրհճ նեաց, գոհացաւ, եբեկ, ետ իւրոցն՝ ընտրեալ, սուրբ եւ բազմեալ աշակերտացն՝ ասելով:

աւարտին, մեր բովանդակ մեղքերուն դատավճիռը ջնջելով՝ մեզի տուիր քու Միածին Որդիդ որպէս պարտապան եւ պարտք, զո՛հ եւ օծեալ, գառն եւ երկնաւոր Հաց, քահանայապետ եւ պատարագ: Որովհետեւ ան Ի՛նքն է բաշխողը եւ Ի՛նքն է որ կը բաշխուի միշտ մեր մէջ, անսպառօրէն: Որովհետեւ ան, մարդանալով, իսկապէ՛ս եւ առանց ցնորքի եւ անշփոթ միութեամբ մարմին առնելով Աստուածածին եւ Սուրբ Կոյս Մարիամէն, մեր մարդկային կենցաղին բոլոր կիրքերուն մէջէն անցա՛ն՝ առանց մեղքի եւ կամովին դիմեց կենսատու Խաչին, որ աշխարհին կեանք պարգեւեց եւ մեզի՛ն փրկութիւն:

ՍՐԲԱԳՈՐԾՈՒՄ

Պարարագիշը, նշխարը առնելով կը խաչանելէ անոր վրայ եւ՝ աշխարհ խաչելու՝ թեան յառաջ՝ կ'ըսէ, թաթո՛ւ կամ Բարձր.

Առնելով Հացը իր սուրբ, աստուածային, անմահ, անարատ եւ արարչագործ ձեռքերուն մէջ, օրհ ճ՝ նեց, գոհութիւն բաժնեց, կտրեց, բաժնեց իր ընտրեալ, սուրբ եւ իրեն Հետ բազմած աշակերտներուն, ըսելով.

Երկո՛ղո՛մք՛ յեօ՛ղ կալեալ զնշխարն՝ կորսա-
ցի սակա՛նի մի, ե՛ս ասացե ի յայն.

Առէք կերէք.
ԱՅՍ Է՛ ՄԱՐՄԻՆ ԻՄ,
որ վասն ձեր եւ բազմաց բաշխի, ի քաւու-
թիւն եւ ի թողութիւն մեղաց:


Ասասանորն. - Ամէն:

Քաճանայն եղեալ զոտրէ մարմինն ի
մաղչմայն՝ թո՛նր կրկնեացե. ասո քացեալ զբա-
ժակն ե՛ս կալեալ՝ խաշակն՛դեացե, ե՛ս ասացե ի
ժաժո՛ւկ.

Նոյնպէս եւ զբաժակն առեալ, օրհճ՝ նեաց,
գոհացաւ, էարբ, ետ իւրոյ՝ ընտրեալ, սուրբ եւ
բազմեալ աշակերտացն՝ ասելով.

Երկո՛ղո՛մք՛ յեօ՛ղ կալեալ զակնն ե՛ս կո-
րացեալ սակա՛ն ինչ, ասացե ի յայն.





Նշխարը երկո- յեռ-՛էերո-ն մէջ առնելով կը
Ըստի ե- կ'ըսէ, Բարձրայայն.

Առէք, կերէք,
ԱՅՍ Է ԻՄ ՄԱՐՄԻՆՍ,

որ ձեզի եւ շատերուն համար կը բաշխուի
մեղքերու քաւովմեան եւ թողութեան համար:

Հա-ապացեալ - Ամէն:

Պատարագիչը, սո-րբ նշխարը մաղցմայնն
մէջ դնելով կը խոնարհի, ապա կը Բանայ սկիւրը,
կը խաշակնիէ անոր վրայ ե- կ'ըսէ, Ժաժո-կ կամ
Բարձր.

Նոյնպէս, բաժակն առնելով օրհ Ք'նեց,
գոհացաւ, ըմպեց, սուաւ իր ընտրեալ, սուրբ
եւ իրեն հետ բազմաժ աշակերտներուն, ըսե-
լով.

Ապա, երկո- յեռ-՛էերով Բոնելով սկիւրը, ինչ
մը կը Ըստի ե- կ'ըսէ, Բարձր.

Արբէք ի ամանէ ամենեքեան.

ԱՅՍ Է ԱՐԻՒՆ ԻՄ՝

ՆՈՐՈՅ ՈՒԽՏԻ,

որ յաղագս ձեր եւ բազմաց Հեղանի, ի
քաւովժին եւ ի թողովժին մեղաց:

Ապաստորն. Ամէն:

Քաւանայն եղեալ զակիւնն ի վայր՝ թոնր
կրկնեացէ. եւ առեալ զմաղղմայն՝ զիցէ ի վերայ
բաթակին, ասելով ի թաթոկ.

Եւ զսոյն միշտ իւր յիշատակ առնել պա-
տուիրան ականդեաց մեզ բարերար Որդիդ քո
Միածին: Եւ իջեալ ի ստորին վայրս մաՀու
մարմնովն՝ զոր ի մերմէս ընկալաւ յազգակ-
ցովժենէ: Եւ զնիգս դժոխոցն աղարտեալ Հզո-
րեղապէս, զքեզ միայն ծանոյց մեզ ճշմարիտ
Աստուած, զԱստուածդ, կենդանեաց եւ մեռե-
լոց:

Երկո՛ղոմբէ՛ յեռօ՛ղ Բարձրացո՛ցեալ զոյսն
ինչ զնո՛ւերան, յե՛ացո՛սցէ նո՛ւո՛ղ զնշան խաչի
ի վերայ մարմնակալին՝ ասելով.

Խմեցէ՛ք ասկէ ամէնքդ,
ԱՅՍ Է՛ ՆՈՐ ՈՒԽՏԻ
ԻՄ ԱՐԻԻՆՍ,

որ ձեզի եւ շատերուն Համար կը թափուի,
մեղքերու քաւութեան եւ թողութեան Համար:

Հա-ապոստոլ - Ամէն:

Պատարագիչը, «կե՛հը դնելու՛մ աեղանին՝ զրայ, կը խոնարհի, ապա մաղղման կը դնէ «կե՛հին զրայ, ըսելու՛մ, Ժաժո-կ կամ Բարձր.

Եւ այս՝ նո՛յնը, քու բարերար Միածին Որդիդ պատուիրեց մեզի որ միշտ իր յիշատակին Համար կատարենք, եւ մահուան անդունդները իջաւ ա՛յն մարմինով, զոր ստացաւ մեր բնութենէն եւ իր զօրութեամբ դժոխքի փականքները խորտակելով, մեզի ճանչցուց Քեզ՝ միա՛կ ճշմարիտ Աստուածը: Աստուածը, ողջերուն եւ մեռեալներուն:

Երկո- յեո-վերով էի՛շ մը Բարձրացնելու՛մ ըն-
Ժաները, խաշի նշանը կը յե-ացնէ անոնցմով
մարմնակալին զրայ, ըսելու՛մ, Բարձր կամ Ժա-
Ժո-կ.

Եւ արդ՝ մեք, Տէ՛ր, ըստ այսմ՝ Հրամանատրութեան յառաջ բերեալ զայս խորհուրդ փրկական մարմնոյ եւ արեան Միաճնի քոյ, յիշեմք զդորա՝ որ վասն մեր զփրկագործ չարչարանն, զկենդանատու խաչելովժիւնն, զերեքօրեայ զթաղումն, զերանելի յարովժիւնն, զաստուածապէս Համբարձումն, զնստելն ընդ աջմէ քո, Հա՛յր, զահաւոր եւ զփառաւորեալ զմիւսանգամ՝ գալուստն խոստովանիմք եւ օրհնեմք:

ՆՈՒՐՈՒՄՆ

Ընթայեացէ ի յայն.

Եւ զքոյս ի քոյոցս քեզ մատուցանեմք, ըստ ամենայնի եւ յազագս ամենեցուն:

Ապաստանո՛րն. Յամենայնի օրհնեալ ես Տէր, օրհնեմք զքեզ, գովեմք զքեզ, գոհանամք զքէն, աղաչեմք զքեզ, Տէ՛ր Աստուած մեր:

Քաճանայն եղեալ զսկիւնն ի վայր ե-

Եւ արդ մենք, Տէր, այս պատուերին Համաձայն, յառաջ բերելով Միաձնիդ Մարմինին եւ Արիւնին այս փրկաւետ խորհուրդը, կը յիշենք մեզի Համար անոր կրած փրկագործ չարչարանքները, կենսատու խաչելութիւնը, երեքօրեայ թաղումը, երանաւետ յարութիւնը, աստուածապէս Համբարձումը, քու աջակողմդ նստիլը, Հայր, եւ անոր ահաւոր ու փառաւոր միւս անգամ գալուստը կը դաւանինք ու կ'օրհնենք:

ՆՈՒԻՐՈՒՄ

Պարարագիշը, ընթացելով կ'ըսէ, Բարձր.

Եւ ինչ որ Քո՛ւ վրէժ է, Քուկիներէդ՝ Քեզի կ'ընծայենք ամբողջութեամբ եւ ամէնուն Համար:

Հա-արացեալ - Ամէն բանի մէջ կ'օրհնենք Քեզ, կը գովենք Քեզ, կը գոհանանք Քեզմէ, կ'աղաչենք Քեզի, Տէր Աստուած մեր:

Պարարագիշը, «կի՛նը վար առնելով՝

զմաղզմայն՝ կափոսցել զբաժանին, է- շո-նը
կրկնեալ՝ Կարաժեացել զՅեոս է- աղօթեացել ի
ժաշո-կ.

Ձքեղ արդարեւ, Տէր Աստուած մեր, գո-
վեմք եւ գրէն գոհանամք Հանապազ: Որ զանց
արարեր զմերով անարժանութեամբս, այսպի-
սի ահաւոր եւ անպատում խորհրդոյ կարգե-
ցեր սպասաւորս: Ոչ յաղագս մերոյ ինչ բարե-
գործութեան՝ յորոց յոյժ թափուր եմք եւ միշտ
ունայն գտանիմք Հանապազ: Այլ ի քո բազմա-
զեղ ներողութիւնդ ցանկ ապաւինեալ՝ Հա-
մարձակիմք մերձենալ ի սպասաւորութիւն
մարմնոյ եւ արեան Միաճնի քոյ Տեառնդ մե-
րոյ եւ փրկչիդ Յիսուսի Քրիստոսի, որում
վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ
եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՉՅեոս շո-րջ աթեալ զընծայի-կ, կողմնակի
Կարճեալ՝ Խաշակնէեացել զժողովո-րդն ի Յայն.

Խաղաղութիւն ✕ ամենեցուն:

Ապաստ-որն. Եւ ընդ Հոգւոյդ քում:

Քաճանայն. Աստուծոյ Երկրպագեսցուք:

մաղպման կը վերցնէ, սկիւր կը թափէ կահարի-
շով, կը խոնարհի, ապա կ'աղօթէ, թաթո-կ կամ
բարձր.

Քէզ, արդարեւ, Տէր Աստուած մեր, կը
գովաբանենք եւ Քեզի գոհութիւն կը յայտ-
նենք ամէն օր՝ որ անտեսելով մեր անարժա-
նութիւնը, այսպիսի ահաւոր ու անպատմելի
խորհուրդի մը պաշտօնեաներ կարգեցիր մեզ,
ո՛չ թէ մեր կատարած բարեգործութիւններուն
Համար, որոնցմէ բոլորովին զուրկ ենք եւ միշտ
դատարկ կը մնանք, այլ քու բազմազեղ ներօ-
ղութեանդ անդադար ապաւինելով, կը Հա-
մարձակինք մերձենալ՝ սպասաւորելու Մար-
մինին եւ Արինին քու Միաճնիդ, մեր Տիրոջ
եւ փրկչին, Յիսուս Քրիստոսի, որուն կը վա-
յելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ՝ եւ
միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Երկո- յեռ-վերով շրջապատելով ընթաները,
կողմնակի կը դառնայ ե- կ'օրհնէ ժողովո-րդը
ըսելով.

Խաղաղութիւն ✨ ամէնուն:

Հա-ապապեալ - Նաեւ քու Հոգիիդ:

Պապարագիշ - Աստուծոյ երկրպագենք:

Աղասա-որն. Առաջի քո, Տէր:

Բաճանայն էրիցս Ըամբո-րեացէ զսեղանն՝
ասելով ի Ժաշո-կ.

Երկիր պագանեմք եւ աղաչեմք եւ
ինդրեմք ի քէն, բարերա՛ր Աստուած, առա-
քեա ի մեզ եւ յառաջի եղեալ յընծայս յայս՝
զմշանջենաւորակից քո եւ զէակից սուրբ Հո-
գիդ:

Արով զՀացս օրՀ Ռ նեալ՝ մարմին ճշմար-
տապէս արարեր Տեառն մերոյ եւ փրկչին Յի-
սուսի Քրիստոսի:

Եւ զբաժակ օրՀ Ռ նեալ՝ արին ստուգա-
պէս արարեր Տեառն մերոյ եւ փրկչին Յիսու-
սի Քրիստոսի:

Արով զՀաց եւ զգինի օրՀ Ռ նեալ՝ մարմին
եւ արին ճշմարտապէս արարեր Տեառն մե-
րոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի:

Բարձրացո-ցանելով զնո-էրան՝

ասացէ ի յայն.

Արպէս զի եղիցի սա ամենեցուն մեզ մեր-
ձեցելոցս՝ յանդարտապարտութիւն, ի քաւու-
թիւն եւ ի թողութիւն մեղաց:

Հա-ապրացեալ - Ք՛ո՛ւ առջեւդ, Տէ՛ր:

Պապարագիշը, երե՛կ անգամ Համբո-րելէ
երկ խորանը, կ'ըսէ, թաթո-կ կամ բարձր -

Կ'երկրպագենք, կ'աղաչենք եւ կը խնդրենք
Քեզմէ, բարերա՛ր Աստուած, առաքէ՛, մեր եւ
Հոս ներկայ դրուած այս ընծաներուն վրայ, քու
մշտնջենակից եւ էակից Սուրբ Հոգիդ,

Որով այս Հացն օրհ թ ներով ճշմարտապէս
կ'ընես զայն մեր Տիրոջ եւ Փրկչին Յիսուս
Քրիստոսի Մարմինը,

Եւ այս բաժակն օրհ թ ներով ստուգապէս
կ'ընես զայն մեր Տիրոջ եւ փրկչին Յիսուս
Քրիստոսի Արինը,

Որով այս Հացն ու գինին օրհ թ ներով ճշմար-
տապէս կ'ընես զանոնք մեր Տիրոջ եւ փրկչին
Յիսուս Քրիստոսի Մարմինը եւ Արինը, փո-
խակերպելով քու Սուրբ Հոգիովդ:

Ապա, ընծաները բարձրացնելով,

կ'ըսէ բարձրացանք.

Որպէսզի ասիկա ըլլայ մեզի, բոլոր Հաղոր-
դուողներուս Համար, անդատապարտութիւն,
մեղքերու քաւութիւն եւ թողութիւն:

Սպասանորն. Ամէն:

Քաճանայն էդէալ ի վայր զնո-էրսն՝ կա-
փո-սցէ զբաժանն է- շո-նր կրկնէսցէ, է- րա-
րաժէալ զՅէո-ս՝ ասասցէ ի թաժո-կ:

Սովաւ շնորհեա զսէր, զհաստատութիւն եւ
զըրզձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի,
սրբոյ եկեղեցւոյ եւ ամենայն ուղղափառ
եպիսկոպոսաց, քաճանայից, սարկաւազաց,
թագաւորաց աշխարհի, իշխանաց, ժո-
ղովրդոց, ճանապարհորդելոց, նաւելոց, կա-
պելոց, վտանգելոց, աշխատելոց եւ որք ի պա-
տերազմունս բարբարոսաց:

Սովաւ եւ օդոց շնորհեա զբարեխառնու-
թիւն եւ անդոց զպտղաբերութիւն, եւ ախտա-
ցելոց ի պէսպէս ցաւն՝ փութապէս զառողջու-
թիւն:

Սովաւ Հանգո զամենեսեան յառաջագոյն ի
Քրիստոս զննջեցեալն՝ զեպիսկոպոսունս,
զերիցունս, զսարկաւազունս եւ զքնաւ ուխտ

Հասարակական - Ամեն:

Պատարագիչը, վար դնելով ընթաները, կը թափէ սկիւղ, կը խոնարհի ե- կ'ըսէ, թափ-կ կամ Բարձր:

Ասոր միջոցով՝ սեր, կայունութիւն եւ բաղ-
ձալի խաղաղութիւն շնորհէ ամբողջ աշխար-
հին. սուրբ Եկեղեցւոյ եւ բոլոր ուղղափառ
եպիսկոպոսներուն, քահանաներուն, սարկա-
ւագներուն, աշխարհի թագաւորներուն, իշ-
խաններուն, ժողովուրդներուն, ճամբորդնե-
րուն, նաւորդներուն, բանտարկեալներուն,
վտանգի ենթարկուածներուն, տառապողնե-
րուն եւ բարբարոսներուն դէմ պատերազմող-
ներուն:

Ասով՝ օգերու բարեխառնութիւն շնորհէ,
արտերու պտղաբերութիւն եւ պէսպէս ցաւերէ
տառապողներուն՝ շուտաւիոյթ առողջութիւն:

Ասով՝ Հանգիստ պարգեւէ կանխապէս
Քրիստոսով բոլոր ննջեցեալներուն. նախա-
Հայրերուն, Հայրապետներուն, մարգարէնե-
րուն, առաքեալներուն, մարտիրոսներուն,
եպիսկոպոսներուն, երէցներուն, սարկաւագ-
ներուն եւ սուրբ Եկեղեցիի բոլոր ուխտաւոր-

Եկեղեցւոյ քում՝ սրբոյ, եւ զամենեսեան՝ որք
յաշխարհական կարգէ՝ զարս եւ զկանայս Հա-
ւատով վախճանեալս:

Ի Յայն.

Ընդ որս եւ մեզ այց արասցեա՛ն բարերար
Աստուած, աղաչեմք:

Ապաստան-որն. Յիշեա Տէր եւ ողորմեա:

Քաճանայն. Աստուածածնին սրբոյ Կուսին
Մարիամնու եւ Յովհաննու Մկրտչին, Ստե-
փանոսի Նախավկային, եւ սրբոյ Հօրն մերոյ
Գրիգորի Լուսաւորչին եւ ամենայն սրբոյ,
եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս աղա-
չեմք:

Ապաստան-որն. Յիշեա Տէր եւ ողորմեա:

Քաճանայն ի ցօնական ա-ո-րս.

Օրհնեալ գովեալ եւ փառաւորեալ, Հրաշա-
լի եւ աստուածազարդ Տէրութեան Քրիստոսի

կամ Աստուածայայտնութեան Քրիստոսի

կամ Յայտնութեան Քրիստոսի

կամ Գալստեան Քրիստոսի

ներուն եւ աշխարհական կարգէն՝ բոլոր այրե-
րուն ու կիներուն, որոնք հաւատքով վախճա-
նած են:

Եպո՛ս Բարձր.

Եւ անոնց հետ մէ՛զ ալ յիշէ, բարերա՛ր
Աստուած, կ'աղաչենք:

Հա-ապոստոլ - Յիշէ՛, Տէ՛ր, եւ ողորմէ՛:

Պապարագիշ - Սուրբ Կոյս Մարիամ Աս-
տուածածնին, Յովհաննէս Մկրտչին, Ստե-
փանոս նախավկային, մեր սուրբ Հօր՝ Գրի-
գոր Լուսաւորչին եւ բոլոր սուրբերուն յիշա-
տակը թող կատարուի այս սուրբ Պատարա-
գին մէջ, կ'աղաչենք:

Հա-ապոստոլ - Յիշէ՛, Տէ՛ր, եւ ողորմէ՛:

Պապարագիշ (Կօնական օրերո-ն)

Օրհնեա՛ն ը, գովեա՛ն ը եւ փառաւորեա՛ն ը, հրա-
շալի՛ եւ աստուածազա՛րդ Քրիստոսի Տէրու-
թեան

Կամ Աստուածայայտնութեան

Կամ Յայտնութեան

Կամ Քալստեան

համ Յարութեան Քրիստոսի
համ Համբարձման Քրիստոսի
համ Գալստեան Հոգւոյն Արբոյ ի դասս
առաքելոյն

համ Պայծառակերպութեան Քրիստոսի
համ Սուրբ Խաչին Քրիստոսի
համ Ծննդեան Քրիստոսի
համ Տէրութեան Քրիստոսի ի Տօնի Փոխ-
ման Մօր քո եւ Կուսին

համ Տէրութեան Քրիստոսի ի Տօնի Ծնն-
դեան Մօր քո եւ Կուսին

համ Տէրութեան Քրիստոսի ի Տօնի Ընծայ-
ման Մօր քո եւ Կուսին

համ Տէրութեան Քրիստոսի ի Տօնի Անա-
րատ Յղութեան Մօր քո եւ Կուսին երկիր
սպազանեմք:

Ապաստան-որն. Փառք Տէրութեան քո, Տէր:

համ Աստուածայայտնութեան քո, Տէր:

համ Յայտնութեան քո, Տէր:

համ Գալստեան քո, Տէր:

համ Յարութեան քո, Տէր:

համ Յարութեան

համ Համբարձման

համ Գալստեան Հոգւոյն Արբոյ առաքեալ-
ներուն դասին վրայ

համ Պայծառակերպութեան

համ Սուրբ Խաչին

համ Ծննդեան

համ Տէրութեան իր Մօր եւ Կուսի Փոխ-
ման տօնին

համ Տէրութեան իր Մօր եւ Կուսի Ծննդ-
դեան տօնին

համ Տէրութեան իր Մօր եւ Կուսի Ընծայ-
ման տօնին

համ Տէրութեան իր Մօր եւ Կուսի
Անարատ Յղութեան տօնին կ'երկրպագենք:

Հա՛արայեալ - Փա՛ռք քու Տէրութեանդ,
Տէ՛ր:

համ Աստուածայայտնութեանդ, Տէ՛ր:

համ Յայտնութեանդ, Տէ՛ր:

համ Գալստեանդ, Տէ՛ր:

համ Յարութեանդ, Տէ՛ր:

կամ Համբարձման քո, Տէր:

կամ Պայծառակերպութեան քո, Տէր:

կամ Սուրբ Խաչին քո, Տէր:

կամ Ծննդեան քո, Տէր:

կամ Տէրութեան Քրիստոսի ի Տօնի Փոխման Մօր քո եւ Կուսին:

կամ Տէրութեան Քրիստոսի ի Տօնի Ծննդեան Մօր քո եւ Կուսին:

կամ Տէրութեան Քրիստոսի ի Տօնի Ընծայման Մօր քո եւ Կուսին:

կամ Տէրութեան Քրիստոսի ի Տօնի Անարատ Յղութեան Մօր քո եւ Կուսին:

Քաճանայն. (իսկ ի Գօնի սրբոց) .

Սուրբ եւ աստուածաճաճոյ մարգարէին (ից), կամ Առաքելոյն (լոց), կամ Հայրապետին (տաց), կամ Մարտիրոսին (սաց), Ա. Ա., որոյ (որոց) այսօր գլիշատակն կատարեցաք, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Ապաստան. Յիշեա Տէր եւ ողորմեա:

Կամ Համբարձմանդ, Տէր:

Կամ Պայծառակերպութեանդ, Տէր:

Կամ Սուրբ Խաչիդ, Տէր:

Կամ Ծննդեան, Տէր:

Կամ Տէրութեան Քրիստոսի իր Մօր եւ Կուսի Փոխման տօնին

Կամ Տէրութեան Քրիստոսի իր Մօր եւ Կուսի Ծննդեան տօնին:

Կամ Տէրութեան Քրիստոսի իր մօր եւ Կուսի Ընծայման տօնին:

Կամ Տէրութեան Քրիստոսի իր Մօր եւ Կուսի Անարատ Յղութեան տօնին:

Պատարագիչ (սոբօրոս- քօնիս) -

Սուրբ եւ աստուածաճաճոյ Մարգարէները,
Կամ Առաքեալները, Կամ Հայրապետները, Կամ
Մարտիրոսները, որոնց յիշատակը կը կատարենք այսօր, թող յիշուին այս սուրբ Պատարագին մէջ, կ'աղաչենք:

Հապտայէալ - Յիշէ՛, Տէր, եւ ողորմէ՛:

Քաճանայն ասացել ի թաթո-կ.

Յիշեա Տէր եւ ողորմեա. Եւ օրհնեա զսուրբ կաթողիկէ եւ առաքելական եկեղեցի քո, զոր փրկեցեր պատուական արեամբ Մի-աճնի քոյ, եւ ազատեցեր խաչին սրբով, շնորհեա սմա զանշարժ զխաղաղութին:

Յիշեա Տէր եւ ողորմեա, եւ օրհնեա զամե-նայն ուղղափառ Եպիսկոպոսունս, որք ուղիղ վարդապետութեամբ Համառօտեն ի մեզ զբանն ճշմարտութեան:

Ի յայն.

Եա առաւել զՍրբազան Պապն մեր զՏէր Ա. Ա. եւ զերջանիկ Պատրիարքն մեր զՏէր Ա. Ա. եւ զերջանիկ նախագահ Եպիսկոպոսա-պետն մեր զՏէր Ա. Ա. կամ զերջանիկ Արքե-պիսկոպոսն մեր զՏէր Ա. Ա. կամ զերջանիկ Եպիսկոպոսն մեր զՏէր Ա. Ա. շնորհեսցես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետու-թեամբ:

Սպասա-ոն. Շնորհեա Տէր:

Քաճանայն ասացել ի թաթո-կ զաղօթս.

Պատարագիչը, թաթո-կ կամ բարձր.

Յիշէ՛, Տէր, եւ ողորմէ՛: Ե՛ւ օրհնէ՛ քու սուրբ, կաթողիկէ եւ առաքելական Եկեղեցիդ, զոր փրկեցիր քու Միաճնիդ պատուական Արիննով եւ ազատեցիր իր սուրբ խաչովը, անշարժ խաղաղութիւն պարգեւէ՛ անոր:

Յիշէ՛, Տէր, եւ ողորմէ՛: Եւ օրհնէ՛ բոլոր ուղղափառ եպիսկոպոսները, որոնք ճշմարտութեան խօսքը կ'աւանդեն մեզի, ուղիղ վարդապետութեամբ:

Պատարագիչը (բարձր).

Եւ մանաւանդ մեր Սրբազան Պապը՝ Տէր Ա. Ա. Քաճանայապետը եւ մեր Գերերջանիկ Պատրիարքը՝ Տէր Ա. Ա. Կաթողիկոսը եւ մեր Արհիպատիւ Եպիսկոպոսը՝ Տէր Ա. Ա., շնորհէ՛ մեզի, երկար օրերով եւ ուղիղ վարդապետութեամբ:

Հա-ապոստոլ - Շնորհէ՛, Տէր:

Պատարագիչը, թաթո-կ կամ բարձր կ'ըսէ.

Յիշեա Տէր եւ ողորմեա, եւ օրհնեա զքո առաջի կացեալ ժողովուրդս, եւ զպատարագիս մատուցողս, եւ պարգեւեա սոցա զպիտոյնս եւ զօգտակարնս:

Յիշեա Տէր եւ ողորմեա, եւ օրհնեա զուխտաւորս եւ զպտղաբերիչս եկեղեցւոյ քոյ սրբոյ, եւ որք յիշեն զաղքատս ողորմածութեամբ. եւ Հատո Նոցա զպարտս Նոցա ըստ ընդաբոյս առատութեան քո՝ Հարիւրապատիկ աստ եւ ի Հանդերձելումբ:

Յիշեա Տէր եւ ողորմեա, եւ գթա ի Հոգիս Հանգուցելոցն, Հանգո զնոսին, եւ լուսաւորեա եւ դասաւորեա ընդ սուրբս քո յարքայութեանդ երկնից եւ արժանի արա ողորմութեան քում:

Յիշեա Տէր եւ զՀոգի ծառայի (կամ աղախնոյ) քոյ Ա. Ա. (յիշատակեսցէ զանունս այնր՝ որոյ վասն մատուցանէ զպատարագն) եւ ողորմեա նմա ըստ մեծի ողորմութեան քում, եւ Հանգո այցելութեամբ ի լոյս երեսաց քոց: (Իսկ եթէ կենդանի իցէ, ասասցէ). Փրկեա զնա յամենայն որոգայթից Հոգւոյ եւ մարմնոյ:

Յիշեա Տէր եւ զայնսոսիկ՝ որք յանձնեցին մեզ յիշատակել յաղօթն՝ զկենդանիս եւ զՀան-

Յիշէ՛, Տէ՛ր, եւ ողորմէ՛: Եւ օրհնէ՛ Հոս ներկայ ժողովուրդը եւ այս ընծաները մատուցողները: Անոնց պարգեւէ՛ ինչ որ իրենց կարեւոր եւ օգտակար է:

Յիշէ՛, Տէ՛ր, եւ ողորմէ՛: Եւ օրհնէ՛ սուրբ եկեղեցիիդ ուխտաւորները, նուիրատուները եւ անոնք, որոնք ողորմածօրէն կը յիշեն աղքատները: Եւ քու բնածին առատաձեռնութեամբ Հարիւրապատիկ փոխարինէ՛ անոնց պարտքերը, թէ՛ այս աշխարհիս վրայ եւ թէ՛ Հանդերձեալ կեանքին մէջ:

Յիշէ՛, Տէ՛ր, եւ ողորմէ՛: Եւ գթա՛ Հանգուցեալ Հոգիներուն: Հանգիստ պարգեւէ՛ անոնց, լուսաւորէ՛ եւ դասէ՛ արդարներուն Հետ երկնքի արքայութեանդ մէջ եւ արժանացո՛ւր Քու ողորմութեանդ:

Յիշէ՛, Տէ՛ր, նաեւ Հոգին ծառայիդ (կամ աղախինիդ) **Ա. Ա.ի** (կը յիշուի անունը անոր, որուն Համար կը մատուցուի պատարագը) եւ ողորմէ՛ անոր Քու մեծ ողորմութեամբ եւ Հանգիստ պարգեւէ՛ Քու երեսիդ լոյսին տեսութեամբը: (Իսկ եթէ ողջ է) փրկէ՛ զայն Հոգիի եւ մարմնի բոլոր որոգայթներէն:

Յիշէ՛, Տէ՛ր, նաեւ անոնք, որոնք ինդրեցին մեզմէ մեր աղօթքներուն մէջ յիշել ողջերն ու Հանգուցեալները: Կատարէ՛ անոնց եւ մեր ինդրանքներուն դիտաւորութիւնը, ուղղելով

գուցեալս. կառավարեա զկամն Հայցմանց նո-
ցա եւ զմերս՝ ընդ ուղղորդն եւ որ լին է
փրկութեամբ: Եւ վարձատրեա բոլորեցունց
զանանց եւ զերանելի բարութիւնսդ: Եւ
զտեալ զխորհուրդս մեր՝ տաճարացոյ յընդու-
նակութիւն մարմնոյ եւ արեան Միաճնի քոյ
Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի:
Ընդ որում քեզ Հօր ամենակալի, Հանդերձ
կենդանարար եւ ազատիչ Սուրբ Հոգւովդ՝
վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ՝
եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Շո-րջ աթեալ զՅէո-ս զընթացի-ն, կողմնակի
դարձեալ՝ խաշակնէնցէ զժողովո-րդն, ասելով
ի Յայն.

Եւ եղիցի ողորմութիւն մեծիս Աստուծոյ եւ
փրկիչիս մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ Ռ
ձեզ ընդ ամենեսեանդ:

Ապաստ-որն. Ամէն. եւ ընդ Հոգւոյդ քում:

Բաճանայն դարաթեալ զՅէո-ս ասացէ ի ժա-
շո-ն.

զանոնք դէպի ճշմարիտն ու փրկաւետք: Եւ փարձատրէ՛ բոլորը քու անսպառ եւ երանաւետ բարիքներովդ: Եւ մաքրելով մեր մտածումները, մեզ տաճար դարձո՛ւր, որպէսզի ընդունենք Մարմինն ու Արինը քու Մինաճսիդ՝ մեր Տիրոջ եւ փրկչին Յիսուս Քրիստոսի, որուն Հետ Քեզի՛ ամենակալ Հօր, ինչպէս նաեւ կենդանարար եւ ազատիչ Սուրբ Հոգիիդ կը վայելէ փառք, իշխանութիւն ու պատիւ, այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Պատարագիչը, յեռ-է-րով շրջադասելով ըն-
ժանէրը, կողմնակի կը դառնայ ե- կ'օրհնէ ժո-
ղովո-րդը ըսելով.

Մեր մեծ Աստուծոյն եւ մեր փրկչին, Յի-
սուս Քրիստոսի, ողորմութիւնը ըլլայ ձեր *
ամէնուն Հետ:

Հա-սարացեալ - Ամէն: Նաե՛ւ քու Հոգիիդ Հետ:

Պատարագիչը, ժաժո-կ կամ Բարձր, յեռ-է-
րը դարագծելով կ'ըսէ.

Աստուած ճշմարտութեան եւ Հայր ողորմութեան, գոհանաւք զքէն, որ ի վեր քան զերանելի նաշապետացն՝ զմեր պարտաւորելոցս առաւել մեծարեցեր զբնութիւն: Վասնզի նոցա Աստուած կոչեցար, իսկ մեզ Հայր Հաճեցար անուանել գթալով: Եւ այժմ՝ Տէր աղաչեմք զքեզ՝ զայսպիսի առ ի քէն զնորոգ եւ զպատուական անուանադրութեանս շնորհ՝ որ ըստ օրէ պայծառացուցեալ ծաղկեցո ի մեջ եկեղեցոյ քում սրբոյ:

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Ի յայն.

Եւ տուր մեզ Համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր, կարդալ զքեզ, երկնաւորդ Հայր, երգել եւ ասել:

Քաճանայն է՝ «պասս»-որն. Հայր մեր՝ որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո, որպէս յերկինս եւ յերկրի:

Աստուած ճշմարտութեան եւ Հայր գթութեան, գոհութիւն կը մատուցանենք Քեզի, որ մեր՝ մեղապարտներու բնութիւնը աւելի մեծարեցիր քան երանելի նաՀապետներունը: Որովհետեւ անոնց Համար Աստուած կոչուեցար, իսկ մեզի՝ Հայր անուանուիլ Հաճեցար, գթալով մեր վրայ: Եւ այժմ կ'աղաչենք Քեզի, Տէր, Քեզմէ տրուած այս նոր ու պատուական անուանումին շնորհքը օրէ օր աւելի պայծառացնելով՝ ծաղկեցն'ւր սուրբ Եկեղեցիիդ մէջ:

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Պատարագիչը, Բարձր, կ'ըսէ.

Եւ սո՛ւր մեզի՛ որ Համարձակաձայն խօսքերով բանանք մեր բերանները, կանչենք Քեզ, երկնաւոր Հայր, երգենք եւ ըսենք.

Պատարագիչ է- Հա-պապեալ - Հայր մեր, որ երկինքն ես, սո՛ւրբ ըլլայ Քու անունդ, թո՛ղ գայ Քու թագաւորութիւնդ, թո՛ղ ըլլայ Քու կամքդ ինչպէս երկինքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ:

*Չհաց մեր Հանապազորդ տուր մեզ այսօր.
Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մէք թողումք մերոց պարտապանաց եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ:*

*Քաճանայն զՅէոսն շո-բջ աթեալ զընթա-
յե-է, Կողմնակի դարձեալ՝ Խաշակնէեացէ զժողո-
վո-բոն, ասելով ի Յայն.*

*Չի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ
փառք յախտեանս. ամէն:*

Խաղաղութիւն ✨ ամենեցուն:

Ապաստ-որն. Եւ ընդ Հոգւոյդ քում:

Քաճանայն. Աստուծոյ Երկրպագեսցուք:

Ապաստ-որն. Առաջի քո, Տէր:

ՎԵՐԱՅՈՒՄ

*Քաճանայն Երկրպագո-թեամբ զՅէոսն յե-
ցո-սցէ ի Ժնօր սեղանոյն, Ե- ասասցէ ի Ժա-
ժո-կ.*

Մեր ամենօրեայ Հացը տո՛ւ ւր մեզի այսօր,
եւ ներէ՛ մեր պարտքերը, ինչպէս մենք ալ կը
ներենք մեր պարտապաններուն: Եւ մի՛ տա-
նիր մեզ փորձութեան, այլ փրկէ՛ մեզ չարէն:

Ապա, յեռ-չեւրովը շրջապատելով ընթաները,
կողմնակի կը դառնայ եւ կ'օրհնէ ժողովո՛րդը,
ըսելով Բարձրասյան.

Որովհետեւ Քո՛ւ վրէ է արքայութիւնը, զօ-
րութիւնը եւ փառքը՝ յախտեանս. ամէն:

Խաղաղութի՛նն թ՛ ամէնուն:

Հա-ապապեալ - Նա՛ եւ քու Հոգիիդ:

Պապարագիշ - Աստուծոյ երկրպագէք:

Հա-ապապեալ - Քու առջեւդ, Տէ՛ր:

ՎԵՐԱՅՈՒՄ

Պապարագիշը կ'երկրպագէ, յեռ-չեւրը կը
կոթնեցնէ սեղանին ելերէին եւ կ'ըսէ, ծածո՛կ
կամ Բարձր.

Որ աղբիւրդ ես կենաց, եւ բխումն ողորմութեան, Հոգի՛ դ սուրբ, ողորմեա ժողովրդեանա, որք խոնարհեալ երկիր պագանէն Աստուածութեանդ քո: Պահեա զսոսա ամբողջս: Տպաւորեա յոգւոջ սոցա զձեւ մարմնոյ ցուցակի՛ առ ի ժառանգութիւն եւ ի վիճակ Հանդերձելոցդ բարեաց:

Երիցս Ըամբո-րեացէ զսեղանն, է- թո-նր կրկնեալ՝ ասացէ ի յայն.

Քրիստոսիւ Յիսուսիւ Տերամբ մերով, ընդ որում քեզ Հոգւոյդ սրբոյ եւ Հօր ամենակալի, վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ապաստ-որն. Պուսիսումէ:

Քաճանայն կալեալ զսո-րբ նշխարն, վերացո-ս-
ցէ ասելով.

Ի սրբութիւն սրբոց:

Դուն որ կեանքի աղբիւրն ես եւ բխումը
ողորմութեան, Սո՛ւրբ Հոգի, ողորմէ՛ ժողո-
վուրդիդ, որ խոնարհած Քու առջեւդ՝
կ'երկրպագէ աստուածութեանդ: Անարատ
պահէ զանոնք: Անոնց մարմիններուն ար-
տաքին կերպարանքը դրոշմէ՛ անոնց Հոգի-
ներուն մէջ, իբր ժառանգութիւն եւ բաժին
Հանդերձեալ բարիքներուդ:

Ապա, երեւի անգամ Համբո-րելով սեղանը ե-
խոնարհելով՝ կ'ըսէ՛ Բարձրայայն.

Մեր Տէր Յիսուս Քրիստոսով, որուն
Հեան՝Քեզի՛, Սուրբ Հոգիիդ եւ ամենակալ
Հօր, կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պա-
տիւ, այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից.
ամէն:

Հա-ապացեալ - Պուսիսո՛ւմէ (ուշագիր ըլ-
լանք):

Պապարագիշը, սո-րբ նշեարը կը Բարձրացնէ
ըսելով.

Սուրբերու սրբութեան:

Սպասա-որն. Միայն սուրբ, միայն Տէր,
Յիսուս Քրիստոս, ի փառս Աստուծոյ Հօր.
ամէն:

Քաճանայն. Օրհնեա՛լ է Հա՛յր Սուրբ Աստուած ճշմարիտ:

Սպասա-որն. Ամէն:

Քաճանայն. Օրհնեա՛լ է Որդի՛ դ սուրբ,
Աստուած ճշմարիտ:

Սպասա-որն. Ամէն:

Քաճանայն. Օրհնեա՛լ է Հոգի՛ դ Սուրբ,
Աստուած ճշմարիտ:

Սպասա-որն. Ամէն:

Քաճանայն զսո-րժ մարմինն եղեալ ի վայր
է- թացեալ զբաժակն՝ նոյնպէս վերացո-սցէ է-
զսո-րժ արի-նն, ասելով.

Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ
Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Հա-ադայեալ - Միայն սուրբ, միայն Տէր,
Յիսուս Քրիստոս, Հօր Աստուծոյ փառքին
մէջ. ամէն:

Պատարագիչ - Օրհնեա՛լ, Հայր սուրբ,
Աստուա՛ծ ճշմարիտ:

Հա-ադայեալ - Ամէ՛ն:

Պատարագիչ - Օրհնեա՛լ, Որդի՛ դ սուրբ,
Աստուա՛ծ ճշմարիտ:

Հա-ադայեալ - Ամէ՛ն:

Պատարագիչ - Օրհնեա՛լ, Հոգի՛ դ սուրբ,
Աստուա՛ծ ճշմարիտ:

Հա-ադայեալ - Ամէ՛ն:

Պատարագիչը, սո-րք Մարնինը գեղեղելով,
կը բանայ սկիզբ ե- կը բարձրացնէ նոյնպէս
սո-րք Երե-նը, ըսելով.

Օրհնութիւն եւ փառք՝ Հօր, Որդիին եւ
սուրբ Հոգիին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Սպասա-որն. Ամէն. Հայր սուրբ, Որդիդ սուրբ, Հոգիդ սուրբ: Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քաճանայն շաճո-կ.

Նայեաց, Տէր մեր Յիսուս Քրիստոս, յերկնից ի սրբութենէ քումմէ, եւ յաթոռոյ փառաց թագաւորութեան քոյ: Եկ ի սրբել եւ ի կեցուցանել զմեզ, որ ընդ Հօր նստիս եւ աստ պատարագիս: Արժանի արա տալ մեզ յանարատ մարմնոյ քումմէ եւ ի պատուական յարենէ, եւ ի ձեռս մեր ամենայն ժողովրդեանս:

Եպա շո-նր կրկնեալ Համբո-րեացէ զսեղանն՝
ասելով.

Տէր Աստուած մեր, որ կոչեցեր զմեզ յսուն Միաճնի Որդւոյ քոյ քրիստոնեայս, եւ շնորհեցեր մեզ մկրտութիւն Հոգեւոր աւազանան ի թողութիւն մեղաց, եւ արժանի արարեր զմեզ Հաղորդել Սուրբ մարմնոյ եւ արեան Միաճնի քոյ: Եւ այժմ աղաչեմք զքեզ, Տէր,

Հա-ադադեալ - Ամէն: Հայր սուրբ, Որդի՛ դ Սուրբ, Հոգի՛ դ սուրբ: Օրհնութիւն եւ փառք՝ ՀՕՐ, Որդիի՛ն եւ Սուրբ Հոգիի՛ն, այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Պատարագիչը, շաճո-կ կամ բարձր.

Նայէ՛ մեզի, Տէ՛ր մեր Յիսուս Քրիստոս, երկնային սրբավայրէդ եւ թագաւորութեանդ փառքի աթոռէն. եկո՛ւ արբացներու եւ կենսագործելու մեզ, Դուն որ Հօր Հետ կը բազմիս եւ Հոս իբր զո՛հ կը մատուցուիս: Հաճէ՛ անարատ Մարմինդ եւ պատուական Արինդ տալ մեզի, եւ մեր ձեռքով՝ ամբողջ ժողովուրդին:

Պատարագիչը կը Համբո-րէ սեղանը, ըսելով.

Տէ՛ր, Աստուա՛ծ մեր, որ Միաժին Որդիիդ անունով մեզ քրիստոնէայ կոչեցիր Հոգեւոր աւազանով՝ մեղքերու թողութեան Համար մեզի մկրտութիւն շնորհեցիր եւ մեզ արժանի ըրիր Հաղորդուելու Միաճնիդ սուրբ Մարմինին եւ Արինին. եւ այժմ՝ կ'աղաչենք Քեզի,

արա զմեզ արժանի ընդունել զսուրբ Խոր-
Հուրդս զայս մեզ ի մեղաց թողութիւն: Եւ գո-
Հովթեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ եւ
սուրբ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

ՀՐԱԿԻ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Առեալ զսո-րբ մարմինն, երկեցս խաշակըն-
ձեացե նովա- ի վերայ Բաժակին, ե- կալեալ
զակիճն՝ դարձցի ե- խաշակնձեացե նովով զժողո-
վո-րդն, ասելով ի Յայն.

Ի սուրբ ✠ ի սուրբ ✠ պատուական մարմ-
նոյ եւ յարենէ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսու-
սի Քրիստոսի, ճաշակեսցուք սրբութեամբ, որ
իջեալ յերկնից բաշխի ի միջի մերում: Սա է
կեանք ✠ յոյս, յարութիւն, քաւութիւն եւ թո-
ղութիւն մեղաց: Սաղմոս ասացէք Տեառն Աս-
տուծոյ մերոյ, սաղմոս ասացէք երկնաւոր թա-
գաւորիս մերոյ անմահի, որ նստի ի կառս քե-
րովբեականա:

Սպասա-որն. Օրհնեալ է Աստուած:

Քաճանայն զսո-րբ նշխարն Բեկեալ յերկո-ս

արժանի՝ ըրէ մեզ ընդունելու այս սուրբ խորհուրդը՝ մեր մեղքերուն թողութեան համար, եւ գոհաբանելով փառաւորելու Քեզ՝ Որդիին եւ Սուրբ Հոգիիդ հետ, այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՀՐԱԻՒՐ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Պատարագիչը, սոբէ Մարմնով երկո- ան-
գամ կը խաչակնէ՛ն «կեհն վրայ», ապա «կեհը
առնելով՝ կը դառնայ ե- անով կը խաչակնէ՛ն
Ժողովո-րդը ըսելով:

Սրբութեամբ ճաշակէք մեր Տիրոջ ու
փրկչին Յիսուս Քրիստոսի սուրբ Ռ, սուրբ Ռ
եւ պատուական Մարմինէն ու Արինէն, որ
երկինքէն իջնելով կը բաշխուի մեր մէջ: Այս է
կեանք, յոյս յարութեան, մեղքերու քաու-
թիւն եւ թողութիւն: Սաղմո՛ ս ըսէք Աստուծոյ՝
մեր Տիրոջ, սաղմո՛ ս ըսէք մեր երկնաւոր եւ
անմահ Թագաւորին, որ կը բազմի քերովբեա-
կան կառքերու վրայ:

Հա-պարայեալ - Օրհնեա՛լ է Աստուած:

Պատարագիչը, սոբէ նշխարը երկո-վի բե-

մասո-նս, զաջոյ յեռ-ինն դիցէ ի մաղպմայն՝
ասելով ի ծածո-կ:

*Չոր օրհնութիւն կամ զոր գոհութիւն ի
վերայ Հացիս եւ բաժակիս ասասցուք. այլ,
Յիսո՛ւս, զքեզ միայն օրհնեմք՝ Հանդերձ
Հարբդ եւ ամենասուրբ Հոգւովդ. այժմ եւ
միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Դարձեալ բեկեալ զայլ մե-ս փոփրին մասն ի
մասնէն՝ որ ի յախո- յեռ-ինն, զմեծն դիցէ ի
մաղպմայն, ասելով:

*Խոստովանիմ եւ Հաւատամ՝ զի դու ես
Քրիստոս Որդի Աստուծոյ, որ բարձեր զմեզս
աշխարհի:*

Զփոփրինն արկցէ խաշանիշ ի բաժանն, ասե-
լով:

Լրոմն ✠ Հոգւոյն սրբոյ:

Ապաստ-որն. Գոհութիւն քեզ Քրիստոս:

կանելով, աջ Յեռ-էինը կը դնէ մաղպմային վրայ,
ըսելով, Ժածո-կ կամ Բարձր.

Ինչպիսի օրհնութիւն կամ ինչպիսի գո-
հաբանութիւն ըսելու ենք այս Հացին եւ այս
բաժակին վրայ: Բայց Յիսո՛ւս, Քե՛զ միայն
կ'օրհնենք, Հօրդ եւ ամենասուրբ Հօգիիդ
Հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից.
ամէն:

Դարձեալ, փոփոխել մաս մը Բեկանելով յախ
Յեռ-էի կրորէն, մեծը կը դնէ մաղպմային վրայ,
ըսելով.

Կը խոստովանիմ եւ կը Հաւատամ, թէ
Դո՛ւն եւ Քրիստոսը, Աստուծոյ Որդի՛ն, որ
կրեցիր աշխարհի մեղքերը:

Իսկ փոփոխ մասնիկը խաշանիշ կը դնէ սկիւղին
մէջ, ըսելով.

Լրո՛ւմը * Սուրբ Հօգիին:

Հա-ապրացեալ - Գոհութիւն Քեզի, ո՛վ
Քրիստոս:

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Ձեզ համար իշն էրեւալ ի վերայ սկհոյ՝ Զո-նր
կրկնեացէ, ե- Յախո- մարամբի կալեալ զսո-րբ
մասն ի մաղչմային ասասցէ.

Հայր սուրբ, որ անուանեցեր զմեզ անուա-
նակցութեամբ Միաճնի քոյ, եւ լուսաւորեցեր
մկրտութեամբ Հոգեւոր աւազանին: Արժանի
արա ընդունել զսուրբ խորհուրդս զայս մեզ ի
մեղաց թողութիւն:

Տպաւորեա ի մեզ զշնորհս Հոգւոյդ սրբոյ՝
որպէս ի սուրբ առաքեալնս, որք ճաշակեցին
եւ եղէն մաքրիչք ամենայն աշխարհի:

Եւ արդ՝ Տէր, Հայր բարերար, զհաղոր-
դութիւնս այս մասնաւորեա ճաշակման երե-
կոյին աշակերտացն՝ բառնալով զխաւար մե-
ղաց իմոց: Մի՛ հայիր յանարժանութիւնս իմ.
եւ մի՛ արգելուր զշնորհս Հոգւոյդ սրբոյ: Այլ
ըստ անբաւ մարդասիրութեան քոյ, պարգե-
եա զսա քաւիչ մեղաց, լուծիչ յանցանաց: Որ-
պէս խոստացաւ եւ ասաց Տէր մեր Յիսուս
Քրիստոս, թէ՛ որ ուտէ զմարմին իմ, եւ ըմպէ
զարին իմ, կեցցէ յաւիտեան:

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Պատարագիչը «կեհը կատարելով ժաշկելով,
կը խոնարհի, ապա շախ մատենելով կը բռնե
սորբ նշխարը մաղչման լրայ ե- կ'ըսե, ժա-
շո-կ կամ բարձր».

Հայր սուրբ, որ մեզ Միաճսիդ անուանա-
կից ըրիր եւ լուսաւորեցիր Հոգեւոր աւազանին
մկրտութեամբ, արժանի՛ ըրէ մեզ ընդունելու
այս սուրբ խորհուրդը՝ մեր մեղքերու թողու-
թեան համար:

Տպաւորէ՛ մեր մէջ Սուրբ Հոգիիդ շնորհք-
ները, ինչպէս ըրիր առաքեալներուդ, որոնք
ճաշակեցին եւ ամբողջ աշխարհը սրբացուցին:

Եւ արդ, Տէ՛ր, Հայր բարերար, այս Հա-
ղորդութիւնն ըլլայ մասնակցութիւն աշա-
կերսներուն երեկոյեան ճաշակումին եւ փա-
րատէ մեղքերուս խաւարը: Մի՛ նայիր անար-
ժանութեանս եւ մի՛ զրկեր զիս Սուրբ Հոգի-
իդ շնորհքներէն: Այլ Քու անսահման մարդա-
սիրութեամբդ պարգեւէ՛ զայն իբր քաւիչ մեղ-
քերու եւ արձակիչ յանցանքներու, ինչպէս որ
խոստացաւ մեր Տէրը Յիսուս Քրիստոս, ըսե-
լով. «Ո՛վ որ ուտէ իմ Մարմինս եւ խմէ իմ՝

Արդ արա զսա մեզ ի քառութիւն, զի որք կերիցեն եւ արբցեն ի սմանէ՝ Հանցեն զօրհնութիւն եւ զփառս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյդ Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտեհից. ամէն:

ՃԱՇՏԱԿՈՒՄՆ ԵՒ ԲԱՇՏԱԿՈՒՄՆ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Ջստօրք մասնիկն եղեալ ի մաղչմանն՝ Ժոնոր կրկնեացէ, ե- դարձեալ ատեալ զստօրք մաստնայաջ յետն ի զերայ մաղչմանի, ե- երկրպագեալ՝ խնդրեացէ զայրիկ մի արդի- միայն զպեացեալ Ըստո- ածա, ե- դատնագրեալ նովա- զինին ի զերայ մաղչմանի՝ ճաշակեացէ աւի- ե- դոդո- թեամք, ասելով.

Մարմին քո անսպական լիցի ✠ ինձ ի կեանս:

Սպասա-որն. Ամէն:

Քաւանայն յետնամաջ կանգոն կացցէ զայ-

Արիւնս՝ յաւիտեան պիտի ապրի»:

Արդ, ըրէ որ ասիկա քաւութիւն ըլլայ մեզի Համար, որպէսզի անոնք, որոնք ասկէ պիտի ուտեն եւ խմեն, օրհնութիւն եւ փառք մատուցանեն Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիիդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՃԱՇՏԱԿՈՒՄ ԵՒ ԲԱՇՇՆՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Պատարագիչը, սորէ մասնիկը զեպեղելով մաղղմային վրայ, կը խոնարհի, աջ յետին մէջ կ'անէ երկո- մասնիկները, պահ մը խնդրանքի աղօթի մը կ'ընէ ներշնայեալ, ապա, ինչպիսիք նշխարով կը խաչակնիէ ո- կը Հաղորդո- ի ըսելով, Բարձր:

Աստուծան Մարմինդ թող կեանք ջ ըլլայ ինծի:

Հա-ապացեալ - Ամէն:

Քահանան, պահ մը յետնամաջ կենալէ ետի,

րիկ մի. ապա Բացցե պէտժանն է- շո-նր կրկնե-
ցե, է- պո-րէ վշրանան՝ որ ի մաղպմայն, ժողո-
վեացե ի Բաժանն, է- Կեառ-նաԳրեալ նովա-
պրեմոն՝ արքցե ասելով.

*Եւ սուրբ Արիւն քո ի քառութիւն թ եւ ի
Թողութիւն մեղաց:*

*Սպասա-որն. Ամէն: Երկիւղիւ եւ Հաւատով
յառաջ մատիք եւ սրբութեամբ Հաղորդե-
ցարուք:*

Քաճանայն դարչեալ առ խորանն է- առեալ
պմանապո-վն, ո-նելով պմի սո-րէ մասնիկ ի
մեջ նորա, դարչցի առ ժողովո-րդն է- ասա-
ցե.

*Ասացէք մեղայ Աստուծոյ:
Հաւատամ ի Հայր սուրբ Աստուած, ճշմա-
րիտ:*

*Սպասա-որն. Ամէն:
Քաճանայն. Հաւատամ յՈրդին սուրբ
Աստուած ճշմարիտ:*

Սպասա-որն. Ամէն:

կը Բանայ սկիւրը, կը խոնարհի, մաղպմային վրայ-
յի փշրանէնէրը կ'ամփոփէ սկիւրին մէջ, ինչպէնէր
կը խաշանէնէ անով է- կը ճաշակէ ըսելով:

Եւ սուրբ Արինդ՝ քաւովթին թ Էլ թողու-
թին մեղքերու:

Սպասարը - Ամէն: Երկիւղով Էլ Հաւատքով
մօտեցէք Էլ սրբութեամբ Հաղորդուեցէ՛ք:

Պատարագիչը, մասնատո-փը կ'առնէ, սո-րք
մասնիկ մը կը Բոնէ անոր վրայ, կը տառնայ տե-
պի ժողովո-րդը է- կ'ըսէ, Բարձր:

Ըսէք՝ մեղայ Աստուծոյ:

Կը Հաւատամ սուրբ Հօր՝ ճշմարիտ Աս-
տուծոյ:

Հա-ատարցեալ - Ամէն:

Պատարագիչ - Կը Հաւատամ սուրբ Որդի-
ին՝ ճշմարիտ Աստուծոյ:

Հա-ատարցեալ - Ամէն:

Քաճանայն. Հաւատամ ի Հոգին սուրբ
Ստուած ճշմարիտ:

Ապաստարն. Ամէն:

Քաճանայն. Խոստովանիմ եւ Հաւատամ զի
սա է ճշմարիտ Մարմին եւ Արին Տեան մե-
րոյ Յիսուսի Քրիստոսի, որ բառնայ զմեզս
աշխարհի:

Ապա խաշակն Էլեզ սո-րջ մասնկամք Հաղոր-
դեացէ ասելով.

Մարմին Տեան մերոյ Յիսուսի ✠ Քրիս-
տոսի:

Յա-արդ բաշխման, ասէ

Մարմին Տեան մերոյ Յիսուսի ✠ Քրիս-
տոսի, լիցի քեզ փրկութիւն եւ առաջնորդ յան-
վախճան ի կեանս. ամէն:

Ապաստարն. Ստուած մեր եւ Տէր մեր
երեւեցաւ մեզ, օրհնեալ եկեալ անուամբ
Տեան:

Պատարագիչ - Կը Հաատամ սուրբ Հոգի-
ին՝ ճշմարիտ Աստուծոյ:

Հա-ապացեալ - Ամէն:

Պատարագիչ - Կը խոստովանիմ եւ կը Հա-
ատամ, թէ այս է ճշմարիտ Մարմինն ու
Արիւնը մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի, որ աշ-
խարհի մեղքերը կը կրէ:

Ապա, սո-րբ մասնիկով խաշանկեւելով՝ կը
բաժնէ Հաղորդո-թի-նը, երկո- րեասաններով,
ըսելով.

Մարմին եւ Արիւն մեր Տիրոջ ✠ Յիսուս
Քրիստոսի:

Վերջին բաշխո-մին ա-արդին՝ ա-ելցնել.

Թող մեր Տիրոջ ✠ Յիսուս Քրիստոսի
Մարմինն ու Արիւնը ըլլան քեզի Համար
փրկութիւն եւ առաջնորդ անվախճան
կեանքի:

Հա-ապացեալ - Մեր Աստուածը եւ մեր Տե-
րը երեւցաւ մեզի: Օրհնեալ ըլլայ Ան՝ որ Տի-
րոջ անունով կու գայ:

Յաւարդելն՝ խաւանայն եկեացէ առ սեղանն
է- դարձցի առ ժողոտո-րդն է- զայն խաշակըն-
վեացէ մասնաբո՛ղն ի Յայն.

Կեցո՛ Տէր ✽ *զժողովուրդս քո, եւ օրհնեա
զժառանգութիւնս քո, Հովուեա եւ բարձրացո
զտոսս՝ յայսմ Հեռէ մինչեւ ի յաւիտեան:*

Առաւ Հանգո-ացէ զմասնաբո-՛ղն ի վերայ
մարմնակալի, խօփեացէ է- դիցէ ի ցառանակի, է-
ժո-նր կրկնեալ՝ փակեացէ զդո-ոն:

Առաւ արբեալ զԳիննին որ ի Բաթակի՝ արբեացէ
արբշա- զմաղմալայն, է- ի Յախ եղջեր սեղանոյ
լո-ացեալ զմաբո-նս՝ դարձցի ի մեջ սեղանոյ,
է- արբցէ ասելով՝ ի ժաժո-կ.

ԳՈՀԱՆԱՄՈՒԹԻՒՆ

Քաւանայն. Գոհանամք զքէս, Հա՛յր ամե-
նակալ, որ պատրաստեցեր մեզ նաւահան-
գիստ սուրբ զԵկեղեցի, տաճար սրբութեան,
ուր փառաբանի սուրբ Երրորդութիւնդ:
Ալելուիա:

Գոհանամք զքէս, Քրիստո՛ս թագաւոր, որ
պարգեւեցեր մեզ կենդանութիւն կենարար

Պատարագիչը Բաշխոմը աւարտելով,
կոչուի զեղի խորան եւ ժողովո՛րդին կը
դառնայ եւ կ'ըսէ Բարձր.

Փրկէ, Տէր, քու ժողովուրդդ եւ օրհ թ
նէ քու ժառանգութիւնդ: Հովուէ եւ բարձ-
րացո՛ւր զանոնք, այժմէն մինչեւ յաւիտեան:

Ապա կը զեղեղէ մասնագործը դասանակին
մէջ, կը խոնարհի եւ կը սկսէ զայն:

Ապա կ'ըմպէ սկիւնն մէջ մնացած գինին, կը
արբէ մաղպաղ, կը լոսայ մարտերը սկիւնն մէջ
եւ կ'ըմպէ ջո՛րը, ըսելով՝ Ժաշո՛ւ կ'համ Բարձր.

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Պատարագիչ - Գոհութի՛ւն կը մատուցա-
նենք Քեզի, ամենակա՛լ Հայր, որ մեզի Համար
իբրեւ նաւահանգիստ պատրաստեցիր սուրբ
Եկեղեցին, սրբութեան տաճար, ուր կը փա-
ռաբանուի Սուրբ Երրորդութիւնդ: Ալելուիա:

Գոհութի՛ւն կը մատուցանենք Քեզի,
Քրիստո՛ս Թագաւոր, որ քու կենարար Մար-

մարմնով եւ արեամբդ քով սրբով: Ալէլուիա:

Գոհանամք զքէն, Հոգի դ ճշմարիտ, որ նորոգեցեր սուրբ զեկեղեցի. անարատ պաշեա Հաւատով Երրորդութեանդ յայսմ Հետե մինչեւ յաւիտեան: Ալէլուիա:

Գոհանամք զքէն, Քրիստո՛ս Աստուած, որ զայսպիսի ճաշակումն բարութեան շնորհեցեր մեզ ի սրբութիւն կենդանութեան: Սովիմք պաշեա զմեզ սուրբս եւ անարատս՝ բնակեալ զմեզք՝ քո աստուածային ինամօքդ: Հովուեա զմեզ յանդաստանի կամաց քոց սրբոց եւ բարերարաց: Որով ամրացեալք յամենայն բանսարկուին ընդդիմութեանց, քումդ եւեթ արժանի եղիցուք լսել ձայնի: Եւ քեզ միայնոյ քաջայաղթ եւ ճշմարիտ Հովուիդ Հետեւել, եւ առ ի քէն ընդունել զպատրաստեալ տեղի յարքայութեանդ երկնից, Աստուա՛ծ մեր եւ Տէ՛ր մեր եւ փրկիչ Յիսուս Քրիստոս: Որ ես օրհնեալ ընդ Հօր եւ ընդ սուրբ Հոգւոյդ. այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ✕ ամենեցուն:

Անքնին, անհաս, երբեակ ինքնութեանդ, Հաստիչ, ընդունող եւ անբաժանելի միասնա-

մինովդ եւ սուրբ Արինովդ կենդանութիւն պարգեւեցիր մեզի: Ալելուիա:

Գոհութի՛ն կը մատուցանենք Քեզի, Հոգի՛ ճշմարիտ, որ վերանորոգեցիր Սուրբ Եկեղեցին. անարատ պաճէ՛ զայն՝ Երրորդութեանդ Հաւատքով, այժմէն մինչեւ յաւիտեան: Ալելուիա:

Գոհութի՛ն կը մատուցանենք Քեզի, Քրիստոս Աստուած, որ մեզի բարութեան այսպիսի ճաշակում մը շնորհեցիր՝ սրբացնելու Համար մեր կեանքը: Մեր մէջ բնակելով Սուրբ եւ անարատ պաճէ՛ մեզ անով, Քու աստուածային Հոգածութեամբդ: Հովուէ՛ մեզ Քու սուրբ եւ բարեսէր կամքիդ արօտավայրերուն մէջ: Մնպէս որ՝ մենք՝ ամրացած բանասարկու սատանային, բոլոր թշնամութիւններուն դէմ, արժանի ըլլանք միայն Քու ձայնդ լսելու եւ Քեզի՛ միայն Հետեւելու, քաջայա՛ ղթ եւ ճշմարիտ Հովիւիդ, եւ երկնքի արքայութեանդ մէջ պատրաստուած տեղը, Քեզմէ՛ ընդունելու Տէ՛ր Աստուած եւ փրկի՛չ Յիսուս Քրիստոս, որ օրհնեալ եւ Հօր եւ Սուրբ Հոգիիդ Հետ, այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Խաղաղութիւն ✠ ամէնուն:

Աքքննելի, անՀասանելի, երրեակ ինքնութեանդ, ստեղծող եւ մարդասէր, անբաժանե-

կան սուրբ Երրորդութեանդ, վայելէ փառք,
իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յա-
ւիտեանս յաւիտենից. ամէն:

ԱՂՕԹՔ ԱՐՁԱԿՄԱՆ

Քաճանայն Համբողջութեալ զսեղանն է- րա-
բաժեալ զՅէո-ս՝ ասասցէ ի Յայն.

Որ օրհնես զայնոսիկ, որք օրհնեն զքեզ,
Տէր, եւ սուրբ առնես զյուսացեալս ի քեզ:
Կեցո զժողովուրդս քո, եւ օրհնես զժառան-
գութիւնս քո:

Չլրումն եկեղեցոյ քո պահեա: Սրբեա զսո-
սա, որք ողջունեցին սիրով զվայելչութիւն
տան քոյ:

Դու զմեզ փառաւորեա աստուածային զօ-
րութեամբ քով: Եւ մի՛ թողուր զյուսացեալքս ի
քեզ: Չխաղաղութիւն քո պարգեւեա ամենայն
աշխարհի, եկեղեցեաց, քահանայից, թագաւո-
րաց քրիստոնէից, եւ զինուորեալ մանկանց
նոցա, եւ ամենայն ժողովրդեանս:

Չի ամենայն սուրբ բարիք, եւ ամենայն
պարգեւք կատարեալք ի վերուստ են իջեալ
առ ի քէն, որ ես Հայր լուսոյ: Եւ քեզ վայելէ
փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ

լի եւ միասնական Սուրբ Երրորդութեանդ կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԱՂՕԹ-Ք ԱՐՁԱԿԱՆ

Պատարագիչը, Համբողջութեամբ սեղանը եւ Գառաձեւով յետեւը, կ'աղօթէ, Բարձր.

Դուն որ կ'օրհնես Քեզ օրհնողները, Տէր, եւ կը սրբացնես Քեզի ապաւինողներս, փրկէ՛քու այս ժողովուրդդ եւ օրհնէ՛ այս ժառանգութիւնդ:

Պաշտօնէ՛ ամբողջութիւնը քու Եկեղեցիիդ: Սրբացո՛ւր անոնք, որոնք սիրով ողջունեցին Քու Տանդ վայելչութիւնը:

Փառաւորէ՛ մեզ Քու աստուածային զօրութեամբդ եւ մի՛ լքեր մեզ՝ Քեզի ապաւինողներս: Խաղաղութիւնդ պարգեւէ՛ ամբողջ աշխարհին. եկեղեցիներուն, քահանաներուն, քրիստոնեայ թագաւորներուն, անոնց զօրքերուն եւ ամբողջ այս ժողովուրդին:

Որովհետեւ բոլոր տուած բարիքները եւ կատարեալ բոլոր պարգեւները վերէն կ'իջնեն, Քեզմէ, որ Հայրն ես լոյսի: Եւ Քեզի՛ կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ՝

միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ապաստան-որն. Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմ Հետէ մինչեւ յաւիտեանս:

Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմ Հետէ մինչեւ յաւիտեանս:

Եւ Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմ Հետէ մինչեւ յաւիտեանս:

Քաճանայն. Կատարումն օրինաց եւ մարգարեից, դու ես Քրիստո՛ս Աստուած փրկիչ մեր: Որ լցեր զամենայն Հայրակամ տնօրէնութիւնս քո, լցո եւ զմեզ Հոգւովդ քով սրբով:

Ապաստան-որն. Սուրբ Խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց, եւ կեցուցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ. ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա:

Քաճանայն. Պաճպանեա զժողովուրդս քո, Քրիստո՛ս Աստուած, ընդ Հովանեաւ սուրբ եւ պատուական խաչիւդ քով ի խաղաղութեան, փրկեա յերեւելի եւ յաներեւոյթ թշնամոյն: Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ

Եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Հա-ապոստոլ - Թող օրհնուի Տիրոջ անունը, այժմէն մինչեւ յաւիտեան:

Թող օրհնուի Տիրոջ անունը, այժմէն մինչեւ յաւիտեան:

Եւ թող օրհնուի Տիրոջ անունը, այժմէն մինչեւ յաւիտեան:

Պապարագիչ - Օրէքին եւ մարգարէներուն կատարումը Դո՛ւ ես, Քրիստո՛ս, մեր Աստուածս ու փրկիչը, որ լիովին կատարեցիր Հօրդ կամքը, Քու մարդեղութեամբդ. մե՛զ ալ լեցուր Սուրբ Հոգիովդ:

Հա-ապոստոլ - Աս սուրբ խաչին շնորհւաղաչէնք Տէրը, որպէսզի անով ազատէ մեզ մեր մեղքերէն եւ ապրեցնէ մեզ իր ողորմութեամբ: Ամենակա՛լ Տէր, Աստուա՛ծ մեր, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

Պապարագիչը - Պաշտանի՛չ եւ յո՛յս Հաւատացեալներու, Քրիստո՛ս Աստուա՛ծ մեր, Քու սուրբ եւ պատուական խաչիդ Հովանիին տակ պաշտանէ՛ Քու ժողովուրդդ խաղաղութեան մէջ, փրկէ՛ տեսանելի եւ ան-

*ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ եւ միշտ
եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

*Սպասա-որն. Օրհնեցից զՏէր յամենայն
ժամ, յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բե-
րան իմ:*

*Քաճանայն խաշակնէսցէ
զԺողովո-րդն՝ ասելով.*

*Օրհնեալ թ եղերուք ի շնորհաց սուրբ Հոգ-
ւոյն, երթայք խաղաղութեամբ, եւ Տէր եղիցի
ընդ ձեզ ընդ ամենեսեան. ամէն:*

տեսանելի թճնամիէն: Արժանի ըրէ գովարա-
նելու եւ փառաւորելու Քեզ՝ Հօր եւ Սուրբ
Հոգիիդ Հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յա-
ւիտենից. ամէն:

Հա-ապրացեալ - Պիտի օրհնեմ Տէրը ամէն
ժամ. ամէն ժամ Անոր օրհնութիւնը շրթունք-
ներուս վրայ պիտի ըլլայ:

Պարարագիշը, օրհնելով

ժողովո՛ր-բո՛ր.

Օրհնեալ Ռ ըլլաք Սուրբ Հոգիին շնորհքնե-
րով գացէ՛ք խաղաղութեամբ եւ Տէրը ձեր
բոլորին Հետ ըլլայ. ամէն:

ՊԱՇՏՈՆ ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ

Հա-արայեալ. եւ եւս խաղաղութեան
զՏէր աղաչեսցո՛ւք ընկալ կեցո եւ ողորմեա:

Քաճանայն. Օրհնութիւն եւ փառք Հօր ✠
եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ի պիտի սկսանին Հարական

Հանգստեան ըստ յայնի ա-ո-րն:

Որ յանէից ստեղծող գոյից Արարչակից
Հօր՝ Բանդ Աստուած, թողութիւն շնորհեա՛
ննջեցելոց քոց ծառայից յորժամ գաս դատել
զոր անարատ ձեռօք ստեղծեր:

Որ ի Հօրէ առաքեցար եւ մարմնացար ի
Սուրբ Կուսէն, թողութիւն շնորհեա՛ ննջեցելոց
քոց ծառայից յորժամ գաս դատել զոր
անարատ ձեռօք ստեղծեր:

Որ ի խաչին անշնչացար, զմահու լուծեր
զիշխանութիւն, թողութիւն շնորհեա՛ ննջեցե-
լոց քոց ծառայից յորժամ գաս դատել զոր
անարատ ձեռօք ստեղծեր: Փառք Հօր եւ

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ

Հասարակական - Դարձեալ խաղաղութեան
Տիրոջ աղաչենք. ընդունէ՛, փրկէ՛ մեզ եւ
ողորմէ՛ մեզի:

Պատարագիչ - Օրհնութիւն եւ փառք՝ Հօր,
Որդիին եւ Սուրբ Հոգիին, այժմ՝ եւ միշտ եւ
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Դպիրները կ'երգեն Հանգստեան
շարականը ըստ պարզածի:

Դուն, որ իբրեւ Հօրը արարչակից՝ ոչինչէն
ստեղծեցիր արարածները, ո՛վ Աստուած Բան,
երբ որ գաս դատելու ինչ որ Քու անարատ
ձեռքերով ստեղծեցիր՝ թողութի՛ն ն շնորհէ
ննջեցեալ ծառաներուդ:

Դուն, որ Հօրմէն զրկուեցար եւ սուրբ Կոյ-
սէն մարմին առիր, երբ որ գաս դատելու ինչ
որ Քու անարատ ձեռքերով ստեղծեցիր՝ թո-
ղութի՛ն ն շնորհէ ննջեցեալ ծառաներուդ:

Դուն, որ խաչին վրայ անշնչացար եւ մա-
հուան իշխանութիւնը ջնջեցիր, երբ որ գաս
դատելու ինչ որ Քու անարատ ձեռքերով
ստեղծեցիր՝ թողութի՛ն ն շնորհէ ննջեցեալ ծա-

Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Որ պսակիչդ ես քոյ սրբոյ եւ անվախճան
բարեաց բաշխող, թողութիւն շնորհեա՛ ննջե-
ցելոյ քոյ ծառայից յորժամ գաս դատել զոր
անարատ ձեռօք ստեղծեր:

Եպա ասէն շայնի- Սաղմոս ճԻԹ:

Ալէլուիա, ալէլուիա:

Ի խորոց կարգացի առ քեզ, Տէ՛ր, Տէ՛ր,
լուր ձայնի իմում:

Եղիցին ականջք քո ի լսել զձայն աղօթից
իմոց:

Թէ զանօրէնութիւնս քննես, Տէ՛ր, Տէ՛ր, ո՛ր
կարէ կալ առաջի քո, զի ի քէն է քաւութիւն:

Վասն անուան քոյ Համբերի, Տէ՛ր. Համբեր
անձն իմ բանի քում, յուսացաւ անձն իմ ի
Տէր:

Ի պաշէ առաւօտու մինչեւ յերեկոյ, ի պա-
շէ յառաւօտու յուսացաւ Իսրայէլ ի Տէր:

Ի Տեառնէ է ողորմութիւն բազում, եւ ի
նմանէ է փրկութիւն, եւ նա փրկեաց զԻսրա-
յէլ յամենայն նեղութեանց նորա:

ուաներուդ: Փառք Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Դուն, որ սուրբերդ կը պսակես եւ անոնց անվախճան բարիքներ կը բաշխես, երբ որ գաս դատելու ինչ որ Քու անարատ ձեռքերով ստեղծեցիր՝ թողութի՛ն շնորհէ՛ ննջեցեալ ծառաներուդ:

Ապա Կ'ըստ-ի Աստուծոս 129:

Ալելուիա, ալելուիա:

Անդունդի խորերէն Քէզ կը կանչեմ, Տէր. Տէր, լսէ՛ իմ ձայնս:

Աղօթքիս ձայնը թող լսելի ըլլայ Քու ականջներուդ:

Եթէ քննես անօրէնութիւններս, Տէր, Տէր, ո՛վ կրնայ կանգնիլ Քու դիմացդ. որովհետեւ դո՛ւն միայն քառութիւնն ես:

Քու անունիդ շնորհիւ Համբերեցի, Տէր. Քու խօսքիդ շնորհիւ Հոգիս Համբերեց. Տիրոջ վրայ վստահեցաւ Հոգիս:

Առաւօտեան պառնէս մինչեւ երեկոյ, առաւօտեան ժամէն՝ Իսրայէլը իր յոյսը Տիրոջ վրայ դրաւ:

Մեծ է Տիրոջ ողորմութիւնը եւ անկէ կու գայ մեր փրկութիւնը. անկա է որ փրկեց Իսրայէլը իր բոլոր նեղութիւններէն:

Սարկա-ագ. Ալէլուիա, օրթի:

Քաճանայն. Խաղաղութիւն ջ ամենեցուն:

Գպիրժ. Եւ ընդ Հոգւոյդ քում:

Սարկա-ագ. Երկիւղածութեամբ լուարուք:

Քաճանայն. Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի (կամ Մարկոսի, կամ Ղուկասու, կամ Յովհաննու, ըստ ձայնի աւուրն):

Գպիրժ. Փառք քեզ, Տէր Աստուած մեր:

Սարկա-ագ. Պուսիսումէ:

Գպիրժ. Ասէ Աստուած:

Ե- խաճանայն ընթէո-նո- ըսոր Յայնի ա-ո-րն
չԼ-ե-րարան :

ԱԻԵՏԱՐԱՆՔ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ ԲԿ. ԴԿ.

ԺԱ. 25: Յայնմ ժամանակի... փոքրոգի:
30

Սարկա-ազ - Ալէլուիա, Օրթի:

Քաճանայ - Խաղաղութիւն թ ամէսուն:

Դպիր - Նաեւ քու Հոգիիդ Հետ:

Սարկա-ազ - Երկիւղածութեամբ լսենք:

Քաճանայ - Սուրբ Աւետարանին, ըստ
Մաթէոսի (կամ Մարկոսի, կամ Ղուկասու
կամ Յովհաննէսի):

Դպիր - Փայ՛ ոք Քեզի, Տէ՛ր, Աստուած մեր:

Սարկա-ազ - Պուսիսումէ:

Դպիր - Աստուած է որ կը խօսի:

Կը կարդացո՛ւն չանգարեան Ա-եղարան մը:

ՄԱՏԹԷՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԲԿ. ԴԿ.

11. 25-30. «Ձեզի Հանգիստ պիտի
տամ»:

ԺԳ. 36: Յայնժամ թողեալ... զնոր եւ
զհին: 52:

ԻԱ. 18: Եւ այգուցն... Հաւատալ նմա: 32:

ԻԵ. 31: Եւ յորժամ... յախտենսկանս: 46:

ԱԻԵՏԱՐԱՆՔ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ ԲԶ. ԴԶ.

Դ. 1: Դարձեալ սկսաւ... ընդոյ՝ լուիցէ: 9:

Դ. 26: Եւ ասէր. այսպէս... մեկնէր
զամենայն: 34:

ԺԳ. 24: Այլ յաւուրն... անցանիցեն: 31:

ԺԳ. 32: Այլ վասն աւուրն... արթուն
կացէք: 37:

ԱԻԵՏԱՐԱՆՔ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ ԱԿ. ԳԿ.

Թ. 10: Դարձան առաքեալքն... սակառի:
17:

ԺԲ. 32: Մի երկնչիր... ի նմանէ: 48:

ԺԵ. 3: Զգոյշ կացէք... առնել՝ արարաք:
10:

ԻԱ. 27: Եւ յայնժամ տեսցեն... ընդ ի
նմանէ: 38:

- 13, 36-52. «Արդարները պիտի փայլին»:
21, 18-32. «Ասպտուղ թզենին»:
25, 31-46. «Վերջին դատաստանը»:

ՄԱՐԿՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԷՆ ԲԶ. ԴԶ.

- 4,1-9. «Սերմանողին առակը»:
4, 26-34. «Ինքնիրեն աճող սերմը»:

13, 24-31. «Մարդու Որդիին գալուստը»:

13, 32-37. Քրիստոնեական Հսկողութիւնը:

ՂՈՒԿԱՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԷՆ ԱԿ. ԳԿ.

9, 10-17. «Հացերու բազմացումը»:

12, 32-48. «Անկորնչական գանձ»:

17, 3-10. «Ծառայել խոնարհութեամբ»:

21, 27-38. «Թզենիին առակը»:

ԱՒԵՏԱՐԱՆՔ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱԶ. ԳԶ.

Բ. 13: Եւ էր մերձ Չատիկն... ասաց Յս:
22:

Ե. 19: Պատասխանի էտ Յիսուս...
զառաքիչն նորա: 23:

Ե. 24: Ամէն ամէն ասեմ... առաքեացն
զիս: 30:

ԺԲ. 24: Ամէն ամէն ասեմ... Հայրն իմ:
26:

Գլխիւն էրգէն շարահանն հանգստեան.

Փառաց ի փառս բարձրանան, աջակողմեանքն վերանան. յորժամ լսեն զերանական ձայն օրհնութեան ի քէն կոչման. ննջեցելոյս մեր լսեցո՛ զաստուածային բարբառդ քո. դասաւորեա՛ զսա վերնոց, երգել քեզ փառս ընդ զուարթնոցն:

Քահանայք եւ ժողովուրդք հայցեմք ի քէն, Տէր բարեգութ. ընդ ննջեցեալն հաւատով ընկալ զմեզ նովին յուսով. Խրոսաաղէմ քաղաք վերին, յորում արդարքն ժողովին, փառքս երգել միշտ ընդ նոսին Երրորդութեանդ երբեակ անձին:

ՅՈՎՀԱՆՆԵՍԻ ԱԽԵՏԱՐԱՆԷՆ ԱԶ. ԳԶ.

2, 13-22. «Յիսուս Տաճարին մէջ:

5, 19-23. «Յիսուսի իշխանութիւնը»:

5, 24-30. «Յիսուսին Հազանդոցը կը փրկուի»:

12, 24-26. «Յորենի Հատիկը»:

Դպիրները կ'երգեն Հանգստեան պատշաճ շա-
րականը:

Աջակողմեանները փառքէ փառք պիտի բարձրանան եւ երկինք վերանան, երբ պիտի լսեն օրհնութեան երանական ձայնդ, որ զիրենք կը կանչէ: Մեր ննջեցեալին ալ լսելի ըրէ՛ աստուածային խօսքերդ եւ դասաւորէ՛ զինք վերին եակներուն հետ՝ քու փառքդ երգելու Համար Հրեշտակներուն հետ:

Քահանաներս եւ ժողովուրդդ, Քեզմէ կը Հայցենք, բարեգո՛ւ վժ Տէր, Հաւատքի մէջ ննջողներուն հետ մէ՛զ ալ նո՛յն յոյսով ընդունէ՛ վերին քաղաքը Երուսաղէմ՝ ուր արդարները կը Համախմբուին, անոնց հետ միշտ երգելու Համար փառքը Երրորդութեանդ երրեակ անձին:

Ի վերին Երուսաղեմ՝ ի բնակարանս Հրեշտակաց, ուր Ենովք եւ Եղիաս կան ծերացեալ աղանակերպ, ի դրախտին Եդեմական պայծառացեալ արժանապէս: Ողորմած Տէր ողորմեա՛ Հոգւոյն մեր ննջեցելոց:

Ահեղ խորհուրդ քաճանային բազկատարած կայր ի բեմին, առաջի սուրբ սեղանոյս. Հուր շիջանի, խաւար մերժի, տրտմեալ Հոգիք ուրախանան. զի թողութիւն մեղաց լինի: Ողորմած Տէր, ողորմեա՛ Հոգւոյն մեր ննջեցելոց:

Քաճանայն. Հոգւոյն (ոցն) Հանգուցելոյն (լոց), Քրիստո՛ս Աստուած, արա Հանգիստ եւ ողորմութիւն, եւ մեզ մեղաւորացս շնորհեա զթողութիւն յանցանաց:

Սարկա-աճ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Վասն Հանգուցեալ (ցելոց) Հոգւոյս (գւոց) աղաչեսցուք զփրկիչն մեր Քրիստոս, զի զսա (զսոսա) ընդ արդարան դասեսցէ, եւ զմեզ կեցուցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ. ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա:

Ընդունել՝ զանոնք վերին Երուսաղեմ՝
Հրեշտակներու բնակարանին մէջ, ուր Ենովք
է Եղիա կը մնան աղանակերպ, արժանաւո-
րապէս պայծառացած Եդեմական դրախտին
մէջ. ողորմա՛ ծ Տէր, ողորմէ՛ մեր ննջեցեալ Հո-
գիներուն:

Ահեղ է խորհուրդը քաշանային, որ բազկա-
տարած կանգնած է բեմին վրայ՝ սուրբ խո-
րանին առջեւ, ուր Հուրը կը շիջանի, խաւարը
կը փարատի, տրտմած Հոգիները կ'ուրախա-
նան, որովհետեւ մեղքերու թողութիւն կը
տրուի: Ողորմա՛ ծ Տէր, ողորմէ՛ մեր ննջեցեալ
Հոգիներուն:

Քաճանայ - Հանգուցեալ այս Հոգիին (Հո-
գիներուն), Քրիստո՛ ս Աստուած, Հանգիստ եւ
ողորմութիւն պարգեւէ եւ մեզի՞ մեղաւորնե-
րու յանցանքներուն թողութիւն շնորհէ:

Սարկա-աճ - Դարձեա՛լ խաղաղութեան
Տիրոջ աղաչէնք: Հանգուցեալ (ներուն) Հոգի-
ին (Հոգիներուն) Համար աղաչէնք մեր փրկիչ
Քրիստոսը, որ զայն (զանոնք) արդարներուն
Հետ դասէ եւ մեզ ալ փրկէ իր ողորմութեան
շնորհիւ: Ամենակալ Տէ՛ր, Աստուա՛ ծ մեր,
փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

Քաճանայն. Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Տէր ողորմեա:

Քրիստո՛ս Որդի Աստուծոյ անոխակալ եւ բարեգութ, գլխա քո արարչական սիրովդ ի Հոգի (Հոգիս) Հանգուցեալ ծառայի (յից) քոյ (քոց) կամ աղախնոյ քոյ (կամ աղախնեայց քոց), (Ա.Ա.): Յիշեա յաւուր մեծի գալստեան արքայութեան քոյ. արա արժանի ողորմութեան, քաւութեան եւ թողութեան մեզայ: Դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քո յաջակողմեան դասուն: Չի դու ես տէր եւ արարիչ ամենեցուն, դատաւոր կենդանեաց եւ մեռելոց: Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնեալ Տէր մեր ✠ Յիսուս Քրիստոս.
ամէն:

Դպիրք. Հայր մեր՝ որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո, որպէս յերկինս եւ յերկրի:

ՉՀաց մեր Հանապազորդ տուր մեզ այսօր. եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ:

Քաճանայ - Տէր ողորմէ, Տէր ողորմէ,
Տէր ողորմէ:

Քրիստոս, Որդի Աստուծոյ, անոխակալ եւ բարեգութ, գթած քու արարչական սիրովդ այս ծառայիդ (ծառաներուդ, աղախինիդ կամ աղախիններուդ) (Ա. Ա.) Հոգիին: Յիշէ զինք (զիրենք) քու թագաւորութեանդ մեծ գալուստին օրը. արժանի ըրէ ողորմութեանդ, քաւութեանդ եւ մեղքերու թողութեան: Պայծառացո՛ւր զինք (զիրենք), սուրբերուդ Հեա՛ն աջակողմդ դասելով: Որովհետեւ դո՛ւն ես Տէրը եւ արարիչը ամէնուն, դատաւորը ողջերու եւ մեռեալներու: Եւ Քեզի՛ կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնեա՛լ Տէր մեր, Յիսուս Քրիստոս:

Դպիքներ - Հա՛յր մեր, որ երկինքն ես, սո՛ւրբ ըլլայ Քու անունդ, թո՛ղ գայ Քու թագաւորութիւնդ, թո՛ղ ըլլայ Քու կամքդ ինչպէս երկինքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ:

Մեր ամէնօրեայ Հացը սո՛ւրբ մեզի այսօր, եւ ներէ՛ մեր պարտքերը, ինչպէս մենք ալ կը ներենք մեր պարտապաններուն: Եւ մի՛ տանիր մեզ փորձութեան, այլ փրկէ՛ մեզ չարէն:

Քաճանայն. Չի քո է արքայութիւնն եւ զօրութիւնն եւ փառք յաւիտեանս. ամէն:

Ե- կցորդէ զՄաղջնանս.

Քրիստոս Աստուած մեր, ողորմեա Համօրէն Հաւատացեալ ննջեցելոց Հոգւոյն (մանաւանդ Ա. Ա. ծառայի կամ աղախնոյ քոյ). ամէն:

Դպիր՛. Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ:

Քաճանայն խաչակնի՛կէսցէ զԺողովո՛ւ-բոցն՝
ասելով.

Օրհնեալ ✠ եղերուք ի շնորհաց սուրբ Հոգւոյն, երթայք խաղաղութեամբ, եւ Տէր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան. ամէն:

ՄԵՍԵՒԻՔ ՊԱՀՈՑ

ԲՇ. Արքայութիւն քո արքայութիւն ամենայն յաւիտենից. եւ տէրութիւն քո յազգէ մինչեւ յազգ:

Քաճանան - Որովհետեւ քուկդ է արքայութիւնը, զօրութիւնը եւ փառքը՝ յաւիտեանս. ամէն:

Ե- Կը կցորդէ Հեփե-եալ Մաղբանէր.

Քրիստոս Աստուած մեր, ողորմէ՛ բոլոր Հաւատացեալ ննջեցեալներուն Հոգիներուն, մանաւանդ Ա. Ա. ծառայիդ կամ աղախինիդ:

Հա-ապացեալ - Պիտի օրհնեմ՝ Տէրը ամէն ժամ, ամէն ժամ Անոր օրհնութիւնը շրթունքներուս վրայ պիտի ըլլայ:

Պապարագիշը, օրհնելով ժողովո՛րդը.

Օրհնեալ չ՛ ըլլաք Սուրբ Հոգիին Հնորհքներով, գացէ՛ք խաղաղութեամբ եւ Տէրը ձեր բոլորին Հետ ըլլայ. ամէն:

ՊԱՀՔԻ ՄԵՍԵՒԻՆԵՐ

ԲՇ. Արքայութիւնդ յաւիտենակա՛ն արքայութիւն է. եւ տէրութիւնդ ազգէ ազգ կը տարածուի:

Հաւատարիմ է Տէր յամենայն բանս իւր.
Էւ արդար է յամենայն գործս իւր:

ԳՇ. Երկիր պագից ի տաճար սուրբ քո.
Երկիւղիւ քո Տէր:

Պարծեսցին ի քեզ սիրելիք անուան քոյ
Տէր. զի օրհնեսցես դու զարդարն:

ԳՉ. Կեցո զձառայս քո, Աստուած իմ, որ ի
քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակե-
ցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ձառա-
յի քոյ, զի առ քեզ Տէր Համբարձի զանձն իմ:

ԵՇ. Բարձր արարէք զՏէր Աստուած մեր.
Երկիր պագէք պատուանդանի ոտից նորա, զի
սուրբ է:

Տէր թագաւորեաց, բարկացան ժողո-
վուրդք, որ նստին ի քերովբէս. սասանեցաւ
Երկիր:

ՈԽԲ. Տեսին ամենայն ծագք երկրի
զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի
սքանչելիս արար:

Հաւատարիմ է Տէրը իր բոլոր խօսքերուն մէջ. եւ արդար է իր բոլոր գործերուն մէջ:

ԳՇ. Պիտի երկրպագեմքու սուրբ տաճարիդ մէջ, քու երկիւղովդ, Տէր:

Քու սիրելիներդ պիտի պարծին քու անունովդ Տէր, որովհետեւ դուն կ'օրհնես արդարը:

ԳԸ. Փրկէ՛ քու ծառայդ, Տէր. քու վրադ դրած եմ ես յոյսս:

Ողորմէ՛ ինձի, Տէր, որովհետեւ քեզի կ'աղաղակեմ օրն ի բուն. ուրախացո՛ւր ծառայիդ Հոգին, որովհետեւ Քեզի՛, Տէր, բարձրացուցի Հոգիս:

ԵՉ. Փառաւորեցէ՛ք մեր Տէր Աստուածը. երկրպագեցէ՛ք անոր ոտքերուն պատուանդանին առջեւ, որովհետեւ Ան սուրբ է:

Տէրը թագաւորեց, սրգողեցան ժողովուրդները, որոնք քերովբէներուն մէջ կը բնակին. սասանեցաւ երկիրը:

ՈՒՐ. Երկրի բոլոր ծայրամասերը տեսան մեր Աստուծոյն փրկութիւնը:

Օրհնեցէ՛ք Տէրը նո՛ր օրհնութիւններով, որովհետեւ սքանչելիքներ ըրաւ Ան:

ԱԷԼՈՒՔ ՃԱՇՏՈՒ ՊԱՀՈՑ

ԱԶ. Հոգի քու սուրբ եւ բարի առաջնորդեացէ ինձ ի յերկիր ուղիդ:

Կամ. Վասն անուան քոյ Տէր կեցուսցես զիս. արդարութեամբ քով Հանցես ի նեղութենէ զանձն իմ:

ԱԿ. Տէր մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. եւ մի բարկութեամբ քով խրատեր զիս:

Կամ. Չգնացս իմ ուղիդ արա ինձ ըստ բանի քում. եւ մի՛ տիրեսցեն ինձ ամենայն մեղք:

ԲԶ. Սիրտ իմ խռովեցաւ յիս. եւ երկիւղ մաշու անկաւ ի վերայ իմ:

ԲԿ. Դարձ, Տէր, եւ փրկեա զանձն իմ. կեցո զիս Տէր ըստ ողորմութեան քում:

ԳԶ. Վասն անուան քոյ Տէր քաւեա զմեղս իմ. զի բազում եղեն՝ յոյժ:

ԳԿ. Ողորմեա ինձ Տէր, զի Հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ:

ԳԸ. Յիշեա Տէր զգթութիւնս քո. եւ զո-

ՊԱՀՔԻ ՃԱՇՈՒ- ԱԼԷԼՈՒԻԱՆԵՐԸ

ԱԶ. Քու սուրբ եւ բարի Հոգիդ թող
առաջնորդէ ինձի դէպի արդարներու երկիրը:

Կաճ. Անունիդ սիրոյն Համար պիտի փրկես
զիս. քու արդարութեամբդ նեղութենէ դուրս
պիտի Հանես Հոգիս:

ԱՎ. Տէ՛ր, մի՛ յանդիմաներ զիս սրանեղու-
թեանդ մէջ եւ մի՛ խրատեր զիս բարկու-
թեանդ մէջ:

Կաճ. Ուղղէ՛ իմ քայլերս խոստումիդ Համե-
մատ. թող ոչ մէկ մեղք իշխէ իմ վրաս:

ԲԶ. Սիրտս խռովեցաւ իմ մէջս. եւ մա-
Հուան վախը տիրեց իմ վրաս:

ԲՎ. Դարձի՛ր, Տէ՛ր, եւ փրկէ՛ Հոգիս. ազա-
տէ՛ զիս, Տէ՛ր, քու ողորմութեանդ Համաձայն:

ԳԶ. Քու անունիդ սիրոյն Համար, Տէ՛ր,
քաւէ՛ մեղքերս. որովհետեւ անյարան շատ են
անոնք:

ԳՎ. Ողորմէ՛ ինձի, Տէ՛ր, որովհետեւ
Հիւանդ եմ ես. բժշկէ՛ Հոգիս, որովհետեւ տակ-
նուվրայ եղան ոսկորներս:

ԴԶ. Յիշէ՛, Տէ՛ր, գթութիւնդ եւ ողորմու-

ղորմութիւնս քո, որք ենն յաւիտենից:

Կամ. Չմեղս մանկութեան իմոյ եւ զանգիտութեան մի՛ յիշեր. այլ յիշեա զիս Տէ՛ր ըստ ողորմութեան քում, վասն քաղցրութեան քոյ. զի քաղցր եւ ուղիղ ես:

ԴՎ. Տէ՛ր, ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ:

Կամ. Չմեղս մանկութեան իմոյ եւ զանգիտութեան մի՛ յիշեր. այլ յիշեա զիս Տէ՛ր ըստ ողորմութեան քում, վասն քաղցրութեան քոյ. զի քաղցր եւ ուղիղ ես:

Կամ. Աղաղակեցի առ քեզ Տէ՛ր եւ ասացի. Դու ես յոյս եւ բաժին իմ՝ յերկրին կենդանեաց:

ԱԼԷԼՈՒ-Ք ՃԱՇՈՒ- ՄԱՐՏԻՐՈՍԱՅ

ԸԶ. Տէր սիրէ զիրաւունս, եւ ոչ ընդ վայր Հարկանէ զսուրբս իւր. այլ յաւիտեան պահէ զնոսս:

Կամ. Փրկութիւն արդարոց ի Տեառնէ է. վերակացու է՛նոցա ի ժամանակս նեղութեան:

Թիւնդ՝ որ յաւիտենական է:

Աճճ. Մի՛ յիշեր մանկութեանս եւ անգիտութեամբ գործած մեղքերը. այլ յիշէ՛ զիս քաղցրութեամբդ, Տէ՛ր, ողորմութեանդ Համեմատ. որովհետեւ քաղցր եւ ուղիղ ես Դուն:

ԴՎ. Տէ՛ր, ողորմութիւնդ յաւիտենական է. մի՛ անտեսեր ձեռակերաներդ:

Աճճ. Մի՛ յիշեր մանկութեանս եւ անգիտութեամբ գործած մեղքերը. այլ յիշէ՛ զիս քաղցրութեամբդ, Տէ՛ր, ողորմութեանդ Համեմատ. որովհետեւ քաղցր եւ ուղիղ ես Դուն:

Աճճ. Քեզի՛ աղաղակեցի, Տէ՛ր, եւ ըսի. Դո՛ւն ես յոյսս եւ բաժինս ողջերու աշխարհին մէջ:

ՄԱՐՏԻՐՈՄՆԵՐՈՒՆ ՃԱՇՈՒ ԱԼԷԼՈՒԻՍՆԵՐԸ

ԸԶ. Տէրը կը սիրէ արդարութիւնը չ'անտեսեր իր սուրբերը. այլ յաւիտենապէս կը պաշտօնէ զանոնք:

Աճճ. Արդարներու փրկութիւնը Տիրոջմէ է. ներդրութեան ժամանակ ան կը Հսկէ անոնց վրայ:

ԱՆ. Պարծեսցին սուրբքն փառօք եւ
ցնծասցեն ի Հանգիստս իւրեանց. եւ բարձր
արասցեն զԱստուած բերանովք իւրեանց:

Կաճ. Լոյս ծագեաց արդարոց. ուղղոց
սրտից եղեւ ուրախութիւն:

ԲԶ. Պարծեսցին սուրբքն փառօք եւ
ցնծասցեն ի Հանգիստս իւրեանց. եւ բարձր
արասցեն զԱստուած բերանովք իւրեանց:

ԲՎ. Կարդացին արդարքն առ Տէր, եւ
Տէր լուաւ նոցա. եւ յամենայն նեղութենէ նո-
ցա փրկեաց զնոսա:

ԳԶ. Վասն քո մեռանիմք զօրհանապաղ.
Համարեցաք որպէս զոչխար ի զենումն:

ԳՎ. Ուրախ լիցին ամենեքեան որք յուա-
ցեալ են ի քեզ. յաւիտեան ցնծասցեն, եւ բնա-
կեցես դու ի նոսա:

ԳԶ. Արդարքն որպէս զարմաւենիս ծաղ-
կեցին. որպէս զմայրսն Վիբանանու բազում
եղիցին:

ԴՎ. Բազում նեղութիւնք են արդարոց.
յամենայնէ փրկէ զնոսա Տէր, եւ պաշէ զամե-
նայն ոսկերս նոցա, եւ մի ի նոցանէ ոչ կորի-
ցէ:

ԱՆ. Սուրբերը փառքով պիտի պարծենան
եւ պիտի ցնծան իրենց Հանգստեան մէջ եւ
Աստուած պիտի փառաւորուի անոնց բերնով:

Կաճ. Լոյս ծագեցաւ արդարներուն վրայ.
ուրախութիւն տիրեց անոնց վրայ, որոնք ու-
ղիղ են սրտով:

ԲՉ. Սուրբերը փառքով պիտի պարծենան
եւ պիտի ցնծան իրենց Հանգստեան մէջ եւ
Աստուած պիտի փառաւորուի անոնց բերնով:

ԲՎ. Արդարները Տիրոջ աղաչեցին եւ Տէ-
րը լսեց զանոնք. եւ իրենց բոլոր նեղութիւննե-
րէն փրկեց զանոնք:

ԳԶ. Քեզի Համար կը մեռնինք ամէն օր.
սպանդ տարուող ոչխարներ Համարուեցանք:

ԳՎ. Պիտի ուրախանան անոնք, որոնք
Քու վրադ դրած են իրենց յոյսը. յաւիտեան
պիտի ցնծան անոնք եւ Դուն պիտի բնակիս
անոնց միջեւ:

ԴԶ. Արդարները պիտի ծաղկին արմաւե-
նիներու նման, Լիբանանի մայրիներուն նման
պիտի բազմանան անոնք:

ԴՎ. Բազմաթիւ նեղութիւններ կը կրեն
արդարները. այդ բոլորէն կը փրկէ զանոնք
Տէրը եւ ողջ կը պաշէ անոնց ոսկորները.
անոնցմէ ոչ մէկը պիտի կորսուի:

ԱԼԷԼՈՒ-Ք ՃԱՇՈՒ- ՅԱՐՈՒԹԵԱՆ

ԱԶ. Դու յարուցեալ գթասցիս ի վերայ Սի-
ովնի. ժամանակ գթարդ նորա հասեալ է ժամ:

Կաճ. Թագաւոր մեծ ի վերայ ամենայն
երկրի Աստուած է. սաղմոս ասացէք նմա
իմաստութեամբ:

ԱԿ. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. օրհ-
նութիւն նմա յեկեղեցիս սրբոց:

ԲԶ. Ծափս հարէք ամենայն Հեթմանոսք.
աղաղակեցէք առ Աստուած ի ձայն ցնծութեան:

Կաճ. Աստուած, դու դարձեալ կեցուցես
զմեզ. ժողովուրդ քո ուրախ եղիցի ի քեզ:

ԲԿ. Արի Տէր Աստուած իմ ի հրամանա
քո, զոր պատուիրեցեր, եւ ժողովք ժողովրդոց
շուրջ եղիցին զքեւ. վասն այսորիկ ի բարձունս
դարձ Տէր:

ԳԶ. Ուրախ եղեւ Իսրայէլ յարարիչ իւր.
որդիք Սիովնի ցնծասցեն ի թագաւորն
իւրեանց:

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՃԱՇՈՒ ԱԼԷԼՈՒԻԱՆԵՐԸ

ԱԶ. Դուն պիտի կանգնիս եւ պիտի գլխաս Սիոնի վրայ. անոր վրայ գլխալու ժամանակը Հասած է:

Կաճ. Աստուած է մեծ թագաւորը ամբողջ երկրի վրայ. իմաստութեամբ սաղմոս ըսէ՞ք անոր:

ԱԿ. Օրհնեցէ՛ք Տէրը նո՛ր օրհնութիւններով. օրհնութի՛ն անոր՝ սուրբերու եկեղեցիներուն մէջ:

ԲԶ. Ծա՛փ զարկէք, բոր՛ր այլազգիներ. ցնծութեան ձայներով Աստուծոյ աղաղակեցէ՛ք:

Կաճ. Ո՛վ Աստուած, դառնալով դէպի մեզ՝ փրկէ՛ մեզ. Քու ժողովուրդդ Քեզմո՛վ թող ուրախանայ:

ԲԿ. Կանգնէ՛, իմ Տէ՛ր Աստուածս, Հրամաններովդ, զորս պատուիրեցիր, եւ ժողովուրդները Քու շուրջդ պիտի Հաւաքուին. ասոր Համար դէպի բարձունքները դարձի՛ր, Տէ՛ր:

ԳԶ. Իսրայէլը ուրախացաւ իր արարիչով. Սիոնի որդիները պիտի ցնծան իրենց թագաւորով:

ԳՎ. Եկայք եւ տեսէք զգործս Աստուծոյ.
որպէս զի աշեղ են խորհրդովք քան զամենայն
որդւոց մարդկան:

ԳԶ. Հաճեցար Տէր ընդ երկիր քո. եւ
դարձուցեր զգերութիւն Յակովբայ:

ԳԿ. Յարեաւ Աստուած, եւ ցրուեցան ամե-
նայն թշնամիք նորա. փախեան ատելիք նորա
յերեսաց նորա:

ԺԱՄԱՄՈՒՏՔ

Զորեկշաբէի եւ Ուրբաթ

Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխա-
ղաղութիւն քո Աստուած տուր մեզ Հանապազ.
զքեզ աղաչեմք:

Երկուշաբէի, Երեկշաբէի,

Հինգշաբէի

Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմա-
ցար ի սուրբ Առաքէն. որ վասն մեր ի յերկնից
իջեր, եւ լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղու-
թիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղութեանց

ԳՎ. Եկէ՛ք եւ տեսէ՛ք Աստուծոյ գործերը.
որքա՛ն աւելի աՀաւոր են անոնք խորՀուրդնե-
րով՝ քան մարդոց բոլոր որդիներուն մտա-
ծումները:

ԴԶ. Դուն Հաճեցար, Տէ՛ր, Քու ստեղծած
երկրիդ. եւ գերութենէ դարձուցիր Յակոբը:

ԴՎ. Կանգնեցաւ Աստուած, եւ ցրուեցան
անոր բոլոր թշնամիները. փախան անոր առ-
ջեւէն զինք ատողները:

ԺԱՄԱՄՈՒՏՆԵՐ

Զորե՛վշա՛բնի ե- Ո-ր՛բա՛ր

Դուն որ կը գերազանցես ամէն միտք, խա-
ղաղութիւնդ տո՛ւր մեզի, ամէն օր, ո՛վ Աս-
տուած, կ'աղաչենք Քեզի:

Երկո՛շա՛բնի, Երե՛վշա՛բնի,

Հինգ՛շա՛բնի

Դուն որ Հօրմէն զրկուեցար իբր Փրկիչ եւ
մարմին առիր սուրբ Կոյսէն, մեզի Համար եր-
կինքէն իջար եւ տիեզերքը լուսաւորեցիր, Քու
խաղաղութիւնդ տո՛ւր մեզի, Դուն որ թագա-

Ես թագաւոր, զխաղաղութիւն եւ զողորմութիւն, որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

Մարտիրոսաց

Ի տաճարի սրբոյ եւ ի յիշատակի սրբոյ մարտիրոսաց զձեռս Համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո Աստուած որ պէս մարդասէր:

Կերակի

Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն, որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհոյ Աստուածածնէն եւ ի միշտ կուսէն. անսխտիսեղիղ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած. մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն. կեցո զմեզ:

Մենդեանն

Ա. Աստուածածին ամէնօրհնեալ, զԲանն անսկիզբն յղացար եւ զԱստուածն անբովանդակելին ծնար, զանպարագրելին ի գիրկս քո

ւորն ես ամէն խաղաղութեան. խաղաղութիւն
եւ ողորմութիւն, Դուն որ ամենակարող ես եւ
մարդասէր:

Մարտիրոսանէրո-

Սուրբերու տաճարին մէջ եւ սուրբ մարտի-
րոսներու յիշատակը կատարելով, մեր ձեռքե-
րը բարձրացած կ'աղաչենք. անոնց բարեխօ-
սութեամբ եւ աղօթքով՝ խաղաղ պահէ՛ մեր
կեանքերը, մարդասէ՛ր Աստուած:

Կիրակի

Միածին Արդի եւ Բանդ Աստուած եւ ան-
մահ էութիւն, որ յանձն առիր մարմնանալ
սուրբ Աստուածածինէն եւ միշտ Կոյսէն, դուն,
անփոփոխելի՛ մարդ դառնալով խաչուեցար,
Քրիստո՛ս, մեր Աստուա՛ծը, եւ մահովդ մահը
խորտակեցիր. Դուն որ մին ես սուրբ Երրոր-
դութեան անձերէն, փառաւորակից Հօր եւ
սուրբ Հոգիին ճեա՛ն՝ փրկէ՛ մեզ:

Մեռնողին

Ա. Անհարսնացեա՛լ Աստուածածին, որ
անսկիզբ Բանը յղացար եւ անխմանալի Աս-
տուծոյ ծնունդ տուիր, անպարփակելին գրկիդ

բարձեր. նմա անդադար բարեխօսեա վասն
անձանց մերոց:

Մննդէանն

Բ. Աստուածածին գբեզ խոստովանեալ
երկրպագէ Եկեղեցի ուղղափառաց. քանզի
ուր քերովբէքն բազմաչեայք եւ աթոռք Հրա-
նիւթք եւ վեցթեւեան սերովբէքն նայել ոչ իշ-
խէին, կրեցեր անսերմնապէս յանապակա-
նումն ի յարգանդի քում որպէս աղախին
զՏէր, եւ ծնար որպէս մարդ զԱստուածն բո-
լորից՝ զմարմնացեալն առ ի քէն զանճառ
զԲանն, ի փրկութիւն աշխարհի եւ կեանք ան-
ձանց մերոց:

Մննդէանն

Գ. Աղաչեմք գբեզ սուրբ կոյս Մարիամ
Աստուածածին, բարձրելոյն զօրովթեամբն Հո-
վանաւորեալ եւ սուրբ Հոգւոյն եկաւորու-
թեամբն լուսաւորեալ. որ զամենայն գոյու-
թեանց ստեղծիչն յղացեալ ծնար անճառա-
պէս. մարմնացելոյն առ ի քէն բարեխօսեա
կեցուցանել զանձինս մեր:

Տէառնընդառաջի

Ա. Ծերունին այսօր Սիմէովն, Հոգւովն

մէջ առիր, անդադար բարեխօսէ՛ Անոր մօտ
մեր Հոգիներուն Համար:

Մնո-նորին

Բ. Աստուածածի՛ն, Քէ՛զ դաւանելով
կ'երկրպագէ ուղղափառ Եկեղեցին, որովհե-
տեւ Հոն՝ ուր չէին Համարձակեր նայիլ բազմա-
չեայ քերովբէները, Հրանիւթ գաւերը եւ վեց-
թեւեան սերովբէները, Դուն իբրեւ աղախին՝
Քու անապական արգանդիդ մէջ առանց
սերմի կրեցիր Տէրը եւ ծնար բոլորիս Աս-
տուածը իբրեւ մարդ, անպատմելի Բանը, որ
Քեզմէ մարմին առաւ իբրեւ փրկութիւն աշ-
խարհի եւ կեանք՝ մեր Հոգիներուն:

Մնո-նորին

Գ. Կ'աղաչենք Քեզի, սուրբ կոյս Մա-
րիա՛ մ' Աստուածածին, որ Բարձրեալին զօ-
րութեան Հովանին վայելեցիր եւ սուրբ Հոգի-
ին գալուստով լուսաւորուեցար, Դուն որ բո-
լոր էակներու ստեղծողը յղացար եւ ծնար ան-
պատմելի կերպով բարեխօսէ՛ մեզի Համար
անոր մօտ, որ Քեզմէ մարմին առաւ:

Տէառ-նընդառ-աջին

Ա. Ծերունի Սիմէոնը, այսօր, Հոգիէն

գայր ի տաճարն, երեւելով քերովբէիցն վեհագոյն. որոյ թելօքն սաւառնեալ ոչ իշխեխն նայել ի յաճեղ փառացն, սա ի գիրկս իւր բարձեալ Համբուրեր Համարձակապէս. եւ գգուեր որպէս մանուկ. եւ աղերսելով Հայցեր արձակել ի խաղաղութիւն:

Տէառնընդառաջի

Բ. Անակգբնական Բանդ Աստուած, ի վերջին աւուրս յանձն առեր լինել մարդ ի կուսէն, եւ արարիչդ յաւիտենից փակեցար ընդ ժամանակաւ: Սուրբ տեր սրբութեանց, եւ անկարօտ մաքրութեանց, եկիր ի տաճարն քառասնօրեայ, զօրինացն կատարեցեր զարդարութիւն. զոր բարձեալ Սիմէոնի զանպարագրելիդ ի գիրկս իւր՝ Հայցեր. որ արձակիչդ եւ կապելոց՝ արձակեա զիս ի խաղաղութիւն: Վասն որոյ ընդ ծերունւոյն Սիմէոնի վերագոչեմք առ քեզ Տէր. սուրբ, սուրբ, սուրբ Տէր զօրութեանց. լի են երկինք եւ երկիր փառօքքո, ի փրկութիւն մեզ՝ Քրիստոս Աստուած, փա՛ ոք քեզ:

Մաղկապարտին

Յնձա Երուսաղէմ, եւ զարդարեա զառաքաստ քո Սիուլս. քանզի ահա թագաւոր քո

միրուած տաճար կու գար, աւելի վե՛հ երեւնալով քան քերովբէները, որոնք սաւառներով իրենց թեւերով, չէին Համարձակեր իսկ նայիլ՝ ա՛հեղ փառքին պատճառով. անիկա, իր գրկին մէջ առնելով մանուկը, Համարձակօրէն կը Համբուրէր եւ կը գգուէր զայն. եւ աղբրսելով կը Հայցէր որ խաղաղութեամբ արձակուի:

Տէառ-նընդառաջին

Բ. Անսկզբնական Բա՛նդ Աստուած, այս նոր ժամանակներուն յանձն առիր մարմնանալ Ադյսէն եւ, ի յաւիտենից արարիչ ըլլալով ժամանակին մէջ փակուեցար. Դուն, սո՛ւրբ եւ սրբութիւններու Տէ՛ր, որ կարօտ չէիր մաքրութեան, քառասնօրեայ՝ տաճար եկար, եւ օրէնքին պատուէրները կատարեցիր. իսկ Սիմէոն, իր գրկին մէջ առնելով Քեզ՝ անբովանդակելին, կը Հայցէր ըսելով. Դո՛ւն որ կ'արձակես անոնք, որոնք կապուած են, զի՛ս ալ արձակէ խաղաղութեամբ: Ուստի Սիմէոն ծերունիին Հետ Քեզի կը գոչէնք. Տէ՛ր, սո՛ւրբ, սո՛ւրբ զօրութիւններու Տէ՛ր, երկինքն ու երկիրը լի են Քու փառքովդ՝ մեր փրկութեան Համար. Քրիստոս Աստուած, փա՛ ոք Քեզի:

Մաղկազարդին

Յնձա՛, Երուսաղէմ, եւ զարդարէ՛ Քու Հարսնարանդ. Սիո՛ն, որովհետեւ ա՛հա՛,

Քրիստոս նստեալ ի յաւանակի նորոյ՝ Հեզութիւն ցուցանելով՝ գայ մտանէ յառագաստ քո Սիովն: Եւ մէք ազաղակեմք՝ ովսաննա, օրհնեալ եկեալ ի յանուն Տեառն, որ ունի զմեծ գողորմութիւն:

Զարկին

Ա. Քրիստոս յարեալ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց, եւ յարութեամբ իւրով մեզ կեանս պարգեւեաց. նմա փառք յախտեանս. ամէն:

Զարկին

Բ. Ահաւոր եւ սքանչելի է խորհուրդ փրկութեան մերոյ: Որ անսկիզբն ի Հօրէ՛ անճառաբար մարմնացաւ ի կուսէն. իսաչի Համբերելով, եւ կամաւոր մահուամբ իւրով զկենդանութեան մեզ պարգեւեաց շնորհս:

Զարկին

Գ. Քանզի յարեալ ի մեռելոց Քրիստոս Աստուած յախտենից արարիչ, եւ յարութիւն ազգի մարդկան. զոր օրհնեն անդադար զինուորութիւնք Հրեշտակաց, եւ ամենայն զուարթունք երկնից, ընդ որս գոչելով ասեմք.

Քրիստոս, Քու թագաւորդ, մատաղ աւանա-
կի վրայ նստած ի նշան Հեզութեան, կու գայ
ու կը մտնէ Քու Հարսնարանդ՝ Սիոն. իսկ
մենք կ'աղաղակենք ըսելով. ուխաննա՛, օրհ-
նեա՛լ է Ան որ կու գայ Տիրոջ անունով, մեծ
ողորմութիւն ցոյց տալով:

Զարկին

Ա. Քրիստոս յարութիւն առաւ մեռեալներէն. Իր մահով մահը խորտակեց եւ Իր յարու-
թեամբը կեանք պարգեւեց մեզի: Փա՛ռք յա-
ւիտենապէս Անոր. ամէն:

Զարկին

Բ. ԱՀաւոր եւ սքանչելի է մեր փրկութեան
խորհուրդը. անսկիզբը՝ որ Հօրմէն կը բխի,
անխմանալի կերպով մարմին առաւ Աոյսէն:
Ան սիրով յանձն առաւ խաչը եւ կամաւոր
կերպով մահուան ենթարկուելով՝ կենդանու-
թեան շնորհքը պարգեւեց մեզի:

Զարկին

Գ. Որովհետեւ մեռեալներէն յարութիւն
առաւ մեր Աստուածը Քրիստոս՝ արարիչ յա-
ւիտենից, որ յարութիւն տուաւ մարդկութեան.
զոր անդադար կ'օրհնեն Հրեշտակային զօրու-
թիւնները եւ երկնային բոլոր էակները, մե՛նք

փառք սոսկալի յարութեան քոյ Տէր:

Համբարձման

Ա. Հիացան վերնական բազմութիւնք՝ տեսանելով զքեզ ի հրեղէն կառս բազմեալ սարսեալ ասէին. ո՛վ է սա որ դիմեալ գայ յԵրուվնայ, եւ եկեալ մտանէ փառօք ի փառս. Տէր փառք քեզ:

Համբարձման

Բ. Որ յանպատում յաթոռ նստիս եւ յանմարմնոց վերօրհնիս, անհասանելի Բա՛նդ Աստուած, ի յերկրի երեւեցար ճշմարիտ մարդ. զտնօրէնութեան կատարեալ զխորհուրդ՝ խաչի եւ մահու Համբերեցեր. եւ զհրաշալի զարութիւնդ քո ցուցեր Հզօր զօրութեամբ: Այսօր Համբարձար փառօք ի յերկինս, եւ զկուսածին զմարմինդ քո հրաշափառապէս լուսազարդեցեր. զոր տեսեալ Եսայիաս նախաձայնեալ ասէր. Ո՛վ է սա՝ որ դիմեալ գայ յերկրէ: Հիացեալ պետութեանց երկնից՝ գոչէին առ միմեանս. Համբարձէք իշխանք զդրօնս ձեր ի վեր, եւ մտցէ թագաւոր փառաց: Այլ որ յամենայնի կարողդ ես եւ Հզօր, Հնորհեա եւ մեզ

ար, անոնց Հետ գոչելով, կ'ըսենք. փա՛ռք
Հրաշալի յարութեանդ, Տէ՛ր:

Համբարձման

Ա. Հիացան երկնային Հոյլերը տեսնելով
Քեզ՝ բազմած Հրեղէն կառքերու վրայ. սար-
սափած կ'ըսէին. ո՛վ է այս, որ Եդովմէն ել-
լելով կու գայ եւ իր փառքով կը մտնէ փառքի
մէջ. Տէ՛ր, փա՛ռք Քեզի:

Համբարձման

Բ. Դուն որ անպատմելի գաճի վրայ կը
նստիս եւ Հոգեղէն էակներէն օրհնութիւն կը
ստանաս, անհասանելի Բա՛նդ Աստուած, երկ-
րի վրայ երեւցար իբր ճշմարիտ մարդ, կատա-
րելով մարդեղութեան խորհուրդը. Դուն որ
խաչը եւ մահը սիրով յանձն առիր եւ Հրաշա-
լի յարութիւնդ իրագործեցիր Հզօր զօրու-
թեամբ. այսօր երկինք Համբարձար փառքով
եւ Հրաշափառ լոյսով զարդարեցիր կուսածին
մարմինդ, զոր Եսայի տեսնելով՝ կը մարգարե-
անար ըսելով. Ո՛վ է այս որ երկրէն բարձրա-
նալով կու գայ: Իսկ երկնային պետու-
թիւնները Հիագմայլ կը գոչէին իրարու. իշ-
խաննե՛ր, բարձրացուցէ՛ք ձեր դռները, որ-

Հանդիպել քեզ ամպովք ի միւս անգամ քո
գալստեանդ. որ միայնդ ես մարդասեր:

Հոգեգալստեան

Աստուած գրեզ խոստովանիմք զսուրբ Հո-
գիդ եւ երկիր պագանեմք. որ ես պատճառ
կենդանութեան եղելոցս եւ խաղաղարար աշ-
խարհի, որ զտգիտութիւն աշակերտացն բա-
զում գիտութեամբ լցեր, եւ ի հրեղէն լեզուս
բաժանեալ անճառելեօք ցուցար նոցա.
աղաղակեմք Տէր, ինայեա եւ կեցո զմեզ:

Եկեղեց-ոյ

Ձխաղաղութիւն շնորհեա Եկեղեցոյ քում
սրբոյ, զխաղաղութիւն եւ զանշարժութիւն ի
թշնամեաց պատերազմէ, եւ Հաստատեա ի մի
Հաւատ զկաթուղիկէ Եկեղեցի. գրեզ խոստո-
վանիմք Տէր եւ Աստուա՛ծ. կեցո զմեզ:

Վարդապետ-ի

Երեւի Տէր այսօր աշակերտացն ի Թա-

պէսզի մտնէ փառքի թագաւորը: Բայց Դուն, որ ամենակարող ես եւ ամենազօր՝ մեզի շնորհէ, որ Հանդիպինք Քեզի ամպերէն վեր, Քու երկրորդ գալուստիդ օրը, Դուն որ միակ մարդասերն ես:

Հոգեգալստեան

Քեզ Աստուած կը դաւանինք, սո՛ւրբ Հոգի, եւ կ'երկրպագենք Քեզի, Դուն որ արարածներուն կեանքի պատճառն ես եւ աշխարհի խաղաղութիւն պարգեւող. որ աշակերտներու տգիտութիւնը անսահման գիտութեամբ լեցուցիր եւ հրեղէն լեզուներու բաժնուելով՝ հրաշալիօրէն յայտնուեցար անոնց. կ'աղաղակենք Քեզի, Տէ՛ր ինայէ՛ մեզի եւ փրկէ՛ մեզ:

Եկեղեց-ոյ

Խաղաղութիւն շնորհէ՛ սուրբ Եկեղեցիիդ, խաղաղութիւն եւ Հաստատութիւն՝ թշնամիներու պատերազմներուն դէմ եւ մէկ Հաւատքի մէջ Հաստատէ՛ կաթողիկէ Եկեղեցիդ. Քէ՛զ կը դաւանինք՝ Տէ՛ր եւ Աստուած, փրկէ՛ մեզ:

Վարդապետին

Տերը աշակերտներուն կ'երեւի այսօր Թա-

բորական լերինն. եւ աշակերտացն զարհուրեալ աղաղակէին ասելով. արասցուք երիս տաղաւարս, մի Տեառն, եւ մի Մովսիսի, եւ մի Եղիայի: Եւ մեք բանաւոր Հօտքս երգեմք ընդ քոյ ճշմարիտ վկայիցդ. առաքեա ի մեզ զընչս քոյ շնորհացդ ի քո միւսանգամ՝ գալստեանդ, եւ կեցո:

Խաչի

Առաջի պատուական ամենայաղթ խաչի քոյ անկանիմք երկրպագելով, եւ խնդրեմք զթողութիւն յանցանաց մերոց. քանզի սովաւ բարձեր զդատապարտութիւն ազգի մարդկան: Եւ այժմ՝ վասն սրբոյ աստուածային քոյ նշանի՝ շնորհեա զերկնային զխաղաղութիւնդ ամենայն աշխարհի:

Գրիգոր Լուսաւորչի

Գրիգոր սուրբ քահանայապետ, որ զԼաւատս ուսուցեր, եւ զբանակս դիւանն Հալաձեցեր. մարդկան ուսուցեր քարոզել զԵրրորդութիւնն. պսակեցար յարքայութեան, արդ բարեխօս լեր առ Տէր վասն մեր:

բոր լերան վրայ. եւ աշակերտները զարհուրած կ'ազաղակէին ըսելով. երեք տաղաւարներ կանգնենք, մէկը Տիրոջ, միւսը Մովսէսին եւ երրորդը Եղիային Համար: Իսկ մենք, բանաւոր Հօտդ, Քու ճշմարիտ վկաներուդ Հետ կ'երգենք. Քու Հնորճբիդ լոյսը սփռէ՛ մեր վրայ, Քու երկրորդ գալստեանդ օրը. եւ փրկէ՛ մեզ:

Խաչին

Պատուական եւ ամենայաղթ խաչիդ առջեւ խոնարհած կ'երկրպագենք եւ մեր յանցանքներուն թողութիւն կը խնդրենք. որովհետեւ ասով ջնջեցիր մարդկային ազգի դատապարտութիւնը: Եւ Հիմա, Քու սուրբ եւ աստուածային նշանովդ, երկնային խաղաղութիւնդ շնորհէ՛ ամբողջ աշխարհին:

Գրիգոր Լուսաւորչին

Գրիգոր, սո՛ւրբ քահանայապետ, որ Հաւատքը քարոզեցիր եւ դեւերու բանակները Հալածեցիր, մարդոց սորվեցուցիր Երրորդութիւնը դաւանիլ եւ երկնքի պսակը ընդունեցար, արդ, բարեխօս եղիր Տիրոջ մօտ, մեզի Համար:

